# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 30 (1530) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 27, 2011
VOLUME 31, NO. 30 (1530) SATURDAY, AUGUST 27, 2011

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՒԵՐ ՃԱՆՉՑՈՒԱԾ Է ԹՈՒՐՔԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ



*2009-ի Հոկտեմբեր 10-ին Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարները Արձանագրութիւնները ստորագրելու պահուն*

*Թուրքիոյ խորհրդարանը, ի շարս այլ օրինագիծերու, անվաւեր ճանչցած է նաեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման եւ երկկողմ յարաբերութիւններու ամրապնդման մասին հայ-թրքական արձանագրութիւնները, որոնք ստորագրուած էին 2009-ի Հոկտեմբեր 10-ին Ցիւրիխի մէջ, երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներ՝ Էդուարդ Նալբանդեանի եւ Ահմեդ Դաւութօղլուի միջեւ:*

*Թրքական «Անատոլու» գործակալութիւնը կը տեղեկացնէ որ, խորհրդարանի ներքին կանոնադրութեան համաձայն, տուեալ օրէնսդրական շրջանին վերջնական լուծում չստացած օրինագծերը կը նկատուին անվաւեր: Այդպիսով, փաստաթղթերը հանուած են Թուրքիոյ օրէնսդիր մարմինի օրակարգէն: Սակայն, կառավարութիւնը կամ պատգամաւորները օրինագիծը կրնան դարձեալ ներկայացնել՝ վերջին ընտրութիւններէն ետք կազմուած նոր խորհրդարանին օրէնսդրական շրջանին:*

*Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներուն կողմէ ստորագրուելէ ետք, արձանագրութիւնները ներկայացուած էին երկու երկիրներու խորհրդարաններուն՝ վաւերացման համար: 2010-ի Ապրիլի 22-ին Հայաստանի գործող Նախագահ Սերժ Սարգսեան յայտարարած էր որ, վաւերացման գործընթացը դադրած է՝ նկատի առնելով որ թրքական կողմը պատրաստ չէ շարունակել Երեւանի հետ երկխօսութիւնը՝ առանց նախապայմաններու, ինչպէս նախատեսուած էր արձանագրութիւններով:*

## ԴԵՍՊԱՆԸ ՎԻՐԱՒՈՐԱԾ Է ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԸ

### ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆԻՆ

*Հայ առաքելական եկեղեցւոյ Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան նամակ ուղարկած է ԱՄՆ պետական քարտուղար Հիլըրի Քլինթընին՝ պատասխանելով քրիստոնէական եկեղեցիներու առնչութեամբ Թուրքիոյ մէջ ԱՄՆ դեսպան Ֆրենսիս Ռիքարտոնէի յայտարարութեան:*

*Ամերիկացի ծերակուտական Ռոպըրթ Մենենտեսի գրաւոր այն հարցին, թէ «մինչեւ 1915 ներկայ Թուրքիոյ տարածքին գործած աւելի քան 2000 քրիստոնէական եկեղեցիներէն քանի՞ հատը այսօր կը գործեն իբրեւ եկեղեցիներ»՝ դեսպանը պատասխանած էր. «քրիստոնէական եկեղեցիներուն մեծ մասը, որոնք կը գործէին մինչեւ 1915, այսօր կը շարունակեն գործել իբրեւ եկեղեցիներ: Որոշ եկեղեցիներ կը գործեն իբրեւ թանգարաններ, մնացեալը խարխլուած են կամ մզկիթներու վերածուած՝ չօգտագործուելու պատճառով»,- ըսած էր դեսպանը:*

*«Կը փափաքէի յիշեցնել, որ մենք միշտ օժանդակած ենք Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ առաւել բնականոն յարաբերութիւններու աջակցութեան ուղղուած ԱՄՆ կառավարութեան ջանքերուն: Այդ ջանքերը հաշուի առնելով՝ դժուար է հասկնալ Թուրքիոյ մէջ հայկական պատմական եկեղեցիներու եւ այլ քրիստոնէական եկեղեցիներու կարգավիճակին առնչութեամբ դեսպան Ռիքարտոնէի հիմնաւորումները: Հարիւրաւոր եկեղեցիներու հիմնայատակ կործանումը, զանոնք անուշադրութեան մատնելը, ոչնչացումը, ինչպէս նաեւ մեր սրբավայրերէն շատերը մզկիթ-*



*Արեւելեան թեմի առաջնորդ Խաժակ արքեպ. Պարսամեան*


*Շար.ը էջ 4*


## «ԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԶՈՅԳԸ ԴԵՍՊԱՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՎ՝ ԼՈՆՏՈՆ ՑՈՅՑ ԿՈՒ ՏԱՅ ԻՐ ԱՆԼՈՒՐՋ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՐԵՒԱՆԻՆ»,- ԿԸ ԳՐԷ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԵՐԹԸ

*Հայաստանի մէջ Միացեալ Թագաւորութեան դեսպանի պաշտօնին Ջոնաթան Ճէյմս Էյվս եւ Քեթրին Ճէյն Լիչ ամուսնական զոյգի նշանակման անդրադառնալով, բրիտանական յայտնի «Տէյլի Մէյլ» թերթը կը գրէ որ, այդ նշանակումով Արտաքին գործոց նախարարութիւնը Բրիտանիան ծաղրանքի առարկայ կը դարձնէ, իսկ Հայաստանի իշխանութիւններու քննադատները կ՚ըսեն, որ այդ ոչ սովորական նշանակումը իրենց երկրի հանդէպ ոչ լուրջ վերաբերմունքի արդիւնք է:*



*Մեծն Բրիտանիոյ դեսպանները իրենց զաւակներուն հետ*

*«Այդ նշանակումը զարմացուց շատ հայերու, եւ մտավախութիւն կայ, որ այդ կը թուլացնէ Մեծ Բրիտանիոյ դիրքերը այդ երկրէն ներս»,- կը գրէ թերթը:*

*«Տէյլի Մէըլ» կը մէջբերէ նաեւ ՀՀ նախկին փոխ արտաքին գործոց նախարար Արման Նաւասարդեանի խօսքերը. «Բրիտանացիները մեզ՝ հայերիս, լուրջ չեն ընդունում: Ես կասկածում եմ, որ նրանք որպէս դեսպան զոյգ կ՚ուղարկեն ԱՄՆ կամ այլ երկիր»,- ըսած է Նաւասարդեան:*

*Մէկ այլ հայ պաշտօնեայ, որ ուզած է անանուն մնալ, թերթին հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ Մեծն Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութեանն իրենց յայտնած են, թէ այդ նշանակումը արդիւնաւէտ գործած է նաեւ Զամպիայի մէջ: Հայաստանէն բացի Զամպիան միակ երկիրն է, ուր դեսպանի պաշտօնին Մեծն Բրիտանիան նշանակած է ամուսնացած զոյգ մը:*

*Հայ պաշտօնեան նաեւ հռետորական հարց տուած է՝ «արդեօք Լոնտոնը այդ կերպ կը վարուէր մէկ այլ երկրի հետ, որն իր համար կարեւոր է»:*

## ՖՐԱՆՍԱՑԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ՝

### «ՂԱՐԱԲԱՂԸ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻ ՔՈՍՈՎՕ ԴԱՌՆԱԼՈՒ»

*«Ղարաբաղի ժողովուրդը իրաւունք ունի հռչակելու իր անկախութիւնը եւ ճանաչում գտնելու միջազգային հանրութեան կողմէ, ինչպէս, օրինակ, Քոսովոն»,- ղարաբաղցի պատգամաւորներու հետ հանդիպման ընթացքին յայտարարած է Ֆրանսայի Ազգային Ժողովի ազգային պաշտպանութեան եւ զինուած ուժերու յանձնաժողովի նախագահ, «Ժողովրդական Շարժման Միութիւն» խմբակցութեան անդամ Գի Տասիէ:*

*«Արդեօ՞ք մէկ դար յետոյ բռնապետի մը քմահաճոյքով Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը պէտք է դարձեալ դժուարութիւններ ունենայ՝ ապրելու այս հողի վրայ, որ իրենն է», ըսած է Տասիէ ու աւելցուցած,- «Ինչո՞ւ պէտք է լռէինք եւ չխօսէինք այն մասին, որ այս տարածքին վրայ իրաւունք ունին ապրելու այն մարդիկ,*




*Ֆրանսայի Ազգային Ժողովի անդամ Գի Տասիէ*


*Շար.ը էջ 4*

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՀՐԱԺԱՐՒՈ՞Մ Է

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*«Միասին» երիտասարդական մերձիշխանական նախաձեռնութեան անդամների հետ Սեւանում տեղի ունեցած հանդիպմանը Սերժ Սարգսեանը յայտարարել է, թէ Հայաստանը 20 տարի անց կը լինի լիակատար ժողովրդավարական եւ իրաւական պետութիւն:*

*Թէ որն է Սերժ Սարգսեանի հաշուարկի մեթոդաբանութիւնը, մնում է կռահել, քանի դեռ այդ մասին չի տրուել պաշտօնական բացատրութիւն: Չէ որ Սերժ Սարգսեանը չէր կարող հենց այնպէս ինչ որ թիւ ասել: Իշխանամերձ երիտասարդների առաջ նա այդպիսի անպատասխանատուութիւն հազիւ թէ հանդէս բերէր: Չի բացառւում իհարկէ, որ Սերժ Սարգսեանը ազդուել է ասենք Ալեքսանդր Դիւմա հօր «Քսան տարի անց» արկածային վէպից: Հնարաւոր են նաեւ այլ ազդեցութիւններ: Բայց հնարաւոր է նաեւ, որ Սարգսեանը մանրակրկիտ հաշուարկել է Հայաստանում ժողովրդավարութեան ընթացքը եւ յստակ որոշել, որ 20 տարի անց է այն տեղ հասնելու ամբողջութեամբ:*

*Յամենայն դէպս վատ չէր լինի, որ Սերժ Սարգսեանը, կամ նախագահի նստավայրի որեւէ պաշտօնական աղբիւր ներկայացնէր հաշուարկի մեթոդաբանութիւնը, հանրութեանը ենթադրութիւններից եւ կռահումների հոգսից ազատելու համար, առաւել եւս, որ կռահումներն ու ենթադրութիւնները յաճախ են տալիս հանրային թիւրըմբռնումների առիթ:*

*Դրանից զատ, արուած յայտարարութիւնը ուշագրաւ հանգամանքներ է ի հայտ բերում: Սերժ Սարգսեանը փաստօրէն հրաժարւում է Հայաստանում ժողովրդավարութիւն հաստատելու եւ իրաւական պետութիւն կառուցելու առաքելութիւնից: Չէ որ նրա նախագահութեանը մնացել է առաւելագոյնը 6-7 տարի, եթէ համարենք, որ Սարգսեանը նաեւ երկրորդ ժամկէտի կը գնայ եւ կը պաշտօնավարի այն մինչեւ վերջ: Հազիւ թէ նա որոշի ամէն գնով նախագահ մնալ առաջիկայ քսան տարում, տեսնելով, թէ ինչ է լինում ասենք Մուպարաքի, Բեն Ալիի կամ Քազաֆիի հետ:*

*Գուցէ Սերժ Սարգսեանը յոյս ունի ընտրուել ասենք 2023 թուականին եւ եւս երկու ժամկէտ պաշտօնավարել: Եթէ Հայաստանի նախագահի ընտրութեան պարբերականութիւնը պահպանուի հերթական տրամաբանութեան եւ ժամանակացոյցի շրջանակում, ապա 2023 թուականին դառնալով նախագահ եւ երկու ժամկէտ պաշտօնավարելով, Սերժ Սարգսեանը կը հասնի 2033 թուականին: Այսինքն, այդ դէպքում իհարկէ իր ասած 20 տարուայ ժամկէտը բաժին կը հասնի իր նախագահութեանը:*

*Բայց, արդեօք Սերժ Սարգսեանը ունի վերստին նախագահ լինելու շանս, եթէ նոյնիսկ կարողանայ մինչեւ բարեյաջող աւարտ հասցնել իր առաջին եւ երկրորդ ժամկէտները ընթացիկ նախագահութեան պարագայում: Շանս իհարկէ կայ, բայց այն դէպքում, եթէ Սերժ Սարգսեանը իր ներկայիս նախագահութիւնն աւարտի Հայաստանում ժողովրդավարութիւն եւ իրաւական պետութիւն ապահովելով: Կարող է արդեօք Սերժ Սարգսեանն ապահովել դա: 20 տարուայ մասին նրա յայտարարութիւնը վկայում է, որ չի կարող: Այլապէս նա «Միասինի» երիտասարդներին կոչ կ՚անէր ասենք ոչ թէ 20 տարի յետոյ սպասուող ժողովրդավարութեանը նպաստել, այլ իր հետ հենց ներկայում կառուցել ժողովրդավարութիւն եւ իրաւական պետութիւն, հենց ներկայումս աջակցել իրեն այդ հարցում:*

*Միւս ուշագրաւ հանգամանք էլ թերեւս այն է, որ Սերժ Սարգսեանը փաստօրէն կամ նախանշում է երկխօսութեան իր պատկերացրած ժամկէտը՝ 20 տարի, կամ էլ իր թերահաւատութիւնն է յայտնում ընդդիմութեան գործունակութեան առումով: Չէ որ ընդդիմութիւնը յայտարարում է, որ երկխօսութիւնը շատ շուտով Հայաստանում բերելու է ժողովրդավարութեան եւ իրաւապետութեան: Եւ եթէ Սերժ Սարգսեանն էլ յայտարարում է, որ այդ ամէնը Հայաստանում կը լինի 20 տարի անց, ուրեմն նա կամ պատրաստւում է երկխօսել 20 տարի, կամ էլ չի հաւատում, որ կամ իր հեռանալուց յետոյ ընդդիմութիւնը կը գայ իշխանութեան, եւ կամ էլ գալով իշխանութեան՝ ընդդիմութիւնը կը կարողանայ 20 տարուց աւելի արագ Հայաստանը դարձնել ժողովրդավարական եւ իրաւական պետութիւն:*

*Բոլոր դէպքերում, Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը «Միասինի» հետ հանդիպմանը, իր համատեքստով, եւ առնուազն գոնէ աուրայով, ոչ այլ ինչ է, քան ակնարկ կամ ազդանշան այն մասին, որ Հայաստանի իշխող դասը պատրաստւում է նոյն կերպ մսխել նաեւ անկախութեան երկրորդ քսանամեակը, ինչպէս առաջինը մսխուեց:*

*Յամենայն դէպս, եթէ չկան այդպիսի տրամադրութիւններ կամ մտադրութիւններ, ապա Հայաստանում արդէն վաղուց ժամանակն է, որ բարձրագոյն յայտարարութիւնները վերաբերեն ներկային, դրանց հեղինակները՝ լինի նախագահ, բարձրաստիճան այլ պաշտօնեայ, թէ ընդդիմութեան առաջնորդ, կոնկրետ պատասխանատուութիւն ստանձնեն ներկան փոխելու համար:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# ՀԱՅԱՍՏԱՆ - 20

*ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ*

*Ժամանակ առ ժամանակ ես իմ այս նշումներն անուանում էի «Հայաստան-2020»: Այդ վերնագրի տակ ես գրում էի ֆելիետոնի ժանրում: Շատ հաւանական է, որ նորից առիթներ լինեն գրելու այդ ժանրում, բայց այս ժամանակահատուածում՝ մինչեւ Սեպտեմբերի 21-ը, ես մի քանի անգամ կ՚անդրադառնամ մեր երկրի անկախութեան 20-ամեակին: Այդ յոբելեանը, բնականաբար, նշուելու է թէ՛ պաշտօնապէս՝ իրական եւ հնարովի նուաճումների մասին խօսակցութիւններով, թէ՛ ընդդիմադիր կեցուածքով՝ ամէն ինչ վատ է, սարսափելի է, մինչեւ աւազակապետութիւնը չկազմաքանդուի՝ ի՞նչ անկախութիւն: Բայց կարեւորն այն է, որ անկախութեան գաղափարը չի արմատաւորուել մեր հասարակութեան մէջ, չի դարձել մեր հպարտութեան եւ մտահոգութեան առարկան: Ինչո՞ւ:*

*Հայաստանում քարոզւում է ամէն ինչ՝ իշխանութիւնը եւ ընդդիմութիւնը, յեղափոխութիւնն ու հակայեղափոխութիւնը, պլիւրալիզմը եւ ազգային գաղափարախօսութիւնը, ծովից ծովն ու գետից գետը, ուղղափառ հաւատքն ու աղանդները: Միակ բանը, որ մեր երկրում չի քարոզւում, անկախութեան գաղափարն է: Որովհետեւ դա ոչ մէկինը չի, ոչ մի կուսակցութիւն դրանից դիվիդենդներ չի ստանայ, ոչ ոք դրանով պաշտօն կամ հարստութիւն ձեռք չի բերի, քաղաքական կամ անձնական հակառակորդներից վրէժ չի լուծի: Հենց այդ պատճառով էլ այսօր շատ քչերի մտքով է անցնում, որ հարիւրաւոր ազգեր դարեր շարունակ երազել են սեփական պետութիւնն ունենալու մասին, բայց չեն հասել իրենց երազանքի իրականացմանը, իսկ մենք 20-րդ դարում երկու անգամ ունեցել ենք նման հնարաւորութիւն (մի կողմ դնենք, թէ ինչի շնորհիւ) եւ այժմ 20 տարի վայելում ենք երկրորդ հնարաւորութիւնը:*

*Դուրս եկէք փողոց եւ հարցրէք (առանց տեսախցիկի, իհարկէ)՝ «ի՞նչ է ձեզ տուել անկախութիւնը», եւ մեծամասնութիւնը, եթէ անկեղծ լինի, կը պատասխանի՝ «տո, ոչ մի բան էլ չի տուել, մեզ ոչ մի անկախութիւն էլ պէտք չի՝ մեզ աշխատանք է պէտք, մեր երեխաներին հաց է պէտք, էս իշխանութիւնը մեզ լաւ չի պահում, եթէ ռուսը լաւ պահի՝ ի՞նչ վատ բան կայ՝ Ռուսաստանի կազմի մէջ լինենք»: Իշխանութիւնն ու ընդդիմութիւնը, իրենց հաշուարկներից ելնելով, «տօն են տալիս» այդ տրամադրութիւններին: Իշխանութեան շարժառիթը հետեւեալն է. քանի որ իշխանական բազմաթիւ կառոյցների եւ անհատների քաղաքական եւ բիզնես-յենարանը Ռուսաստանում է, նրանք շահագրգռուած են, որ հասարակութիւնը պահպանի «ֆորպոստային» մտածելակերպը եւ յոյսը դնի «ռազմավարական» գործընկերոջ վրայ: Ընդդիմութիւնն էլ, հասկանալով, որ ընտրազանգուածի հիմքն են կազմում սոցիալական դժգոհութիւններ ունեցող մարդիկ, կարծում է՝ որքան շատ բողոքեն որեւէ բանից՝ երկրից, պետութիւնից, անկախութիւնից, համակարգից, այնքան լաւ՝ միեւնոյն է, այդ բողոքն ուղղուած է իշխանութեան դէմ: Հետեւաբար, երբ ՀԱԿ-ի երիտասարդները վանկարկում են՝ «ազատ, անկախ Հայաստան», վստահ չեմ, որ նրանք նկատի ունեն բուն անկախութիւնը եւ ոչ թէ իրենց թիմի քաղաքական նպատակները:*

*Մինչդեռ որպէսզի երկիրը փաստացի, ոչ միայն իրաւաբանօրէն, անկախ լինի, քաղաքացիները պէտք է գիտակցեն, որ դա իսկապէս անհրաժեշտ է:*

*«ԱՌԱՒՕՏ»*

# ԸՆԴԴԷՄ ՄԱՐԴՈՒ

*Ինչքան փոքրաթիւ ու օրէցօր քչացող ազգ ենք, բայց մի ֆենոմենալ յատկութիւն ունենք՝ չնկատել Մարդուն: Զգացե՞լ էք, որ բոլոր խնդիրներն աշխատում են բարձրացնել մեծ թիւով մարդկանց անունից, ստորագրահաւաքներ կազմակերպել, համազգային խնդիրներ արծարծել: Իսկ կոնկրետ մէկ մարդու խնդիրը եւ կարծիքը ոչ մէկին չի հետաքրքրում: Երեւանի Աբովեան փողոցի վրայ կար մի բարեկեցիկ խանութ՝ «Միլանօ» անունով: Ընդհանրապէս՝ Աբովեան փողոցն ու յատկապէս նրա սկզբնամասը՝ սկսած «Սիլ Պլազայից», մայրաքաղաքի ամենագողտրիկ հատուածներից էր: Այս փողոցով անցնելիս մենք մեզ երեւանցի, այսինքն՝ իրական մշակոյթի կրող, թամանեանական ճարտարապետութեան ու հնամենի ազգի հետնորդ էինք զգում: Հիմա քայլում ես Աւօ Կարագուլեանի կառուցած շէնքերի մօտով, անցնում Մայրապետեանի կառուցածի կողքով, հասնում «Ալեն-Էլեն» կոչուող այլանդակ շէնքին, ապա Ծառուկեանի անճոռնի կառոյցին, բարձրանում մինչեւ Սայաթ-Նովա եւ յայտնւում «Գարդերոբ» անունով այլանդակ խանութների շարքում ու հասկանում, որ քո սիրելի մայրաքաղաքից ոչինչ չի մնացել: Ո՞ւմ էր խանգարում Աբովեան փողոցը, որ այսպէս արմատախիլ արեցին՝ իր ուրոյն աուրայով, իր ցածրիկ ու աչք շոյող շէնքերով, որոնց անգամ աւերակներն աւելի մարդկային ու սրտամօտ էին, քան այս անշունչ երկնաքերերը: Ո՞ւմ ոտքն էր տրորել «Միլանօ» խանութի սեփականատէրը, որին մի քանի տարի է՝ հալածում են ու ի վերջոյ խանութը հիմնայատակ քանդեցին: Արդեօ՞ք մեր սիրիացի հայրենակիցն ու միւս մեծահարուստները մայրաքաղաքում կառուցապատում իրականացնելու համար աւելի յարմար տարածքներ չգտան: Բայց չէ՞ որ կար Վահագն Յովնանեանի «Վահագնի» թաղամասի օրինակը, որն ամայի տարածքում գեղեցիկ թաղամաս հիմնեց ու նաեւ բիզնես ծաւալեց: Ինչո՞ւ այս փորձը չզարգացրին:*

*ԽՄԲԱԳՐԱԿԱՆ*
*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $120.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԿԱՅԱՑԱՒ ՀԱԿ - ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ 6-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



ՀԱԿ-ի եւ իշխանութիւններու ներկայացուցիչները իրենց հերթական հանդիպման ընթացքին

Երեքշաբթի, Օգոստոս 23-ին կայացաւ ՀԱԿ-ի եւ իշխանութեան պատուիրակութիւնների թիւով 6-րդ հանդիպումը:

Կառավարութեան ընդունելութիւնների տանը մօտ 5.5 ժամ տեւած հանդիպումից յետոյ ՀԱԿ-ի պատուիրակութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը վստահութիւն յայտնեց, որ Կոնգրէսի կալանաւորուած ակտիւիստ Տիգրան Առաքելեանի խափանման միջոցը փոխելու հարցը արագօրէն կը կարգաւորուի:

Հաշուի առնելով հենց այդ հանգամանքը, երկու պատուիրակութիւնները անցել են օրակարգային հարցերի քննարկմանը եւ լսել՝ իշխանութիւնների հակափաստարկները արտահերթ ընտրութիւններ անցկացնելու ՀԱԿ-ի հիմնաւորումների շուրջ:

Իշխանական պատուիրակութեան ղեկավար Դաւիթ Յարութիւնեանը տեղեկացրեց, որ Օգոստոսի 9-ի միջադէպից բացի, հանդիպման ընթացքում իշխանական պատուիրակութիւնը Կոնգրէսին է ներկայացրել իր 130 էջից բաղկացած հակափաստարկները՝ արտահերթ ընտրութիւնների անցկացման խնդրի շուրջ: Ընթերցուել է այդ հակափաստարկների երկու երրորդը, եւ Ուրբաթ օրը շարունակելու են դրա ընթերցումը:

Հակադարձելով Կոնգրէսի պատուիրակութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի պնդմանը, թէ իշխանութեան ներկայացրած հակափաստարկները շատ աւելի լաւ են հիմնաւորում արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների անցկացման անհրաժեշտութիւնը՝ Յարութիւնեանը ասաց. - «Հռետորական տեսանկիւնից միգուցէ գեղեցիկ հնարք է օգտագործել պարոն Զուրաբեանը: Բնականաբար՝ հակառակն է: Մենք այս պահին չենք տեսնում, որ ՀԱԿ-ի որեւէ մի հիմնաւորում է արտահերթ ընտրութիւնները»:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ շուրջ մէկ ամիս տեւած երկխօսութեան ընթացքում կողմերը ընդհանուր յայտարարի չեն եկել: ՀԱԿ-ը պնդում է, որ արտահերթ ընտրութիւնների անցկացման անհրաժեշտութիւնը հիմնաւորուած է, իսկ իշխանութեան պատուիրակութեան ղեկավարն ասում է, թէ Կոնգրէսի փաստարկները չեն հիմնաւորում այդ անհրաժեշտութիւնը:

# ԹԱԼԱՆԵԼ ԵՆ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻՆ



Նախկին պատգամաւոր Նապոլեոն Ազիզեան

Կիրակի, Օգոստոս 21-ի առաւօտեան ժամը 5-ին, դիմակաւորուած 5 անձինք պատշգամբով մտել են Կիլիկիա թաղամասում գտնուող Նապոլեոն Ազիզեանի տունը: Նրանք ծեծի են ենթարկել նախկին պատգամաւորին, նրա կնոջը եւ դստերը, այնուհետեւ զէնքի սպառնալիքով յափշտակել են 3 միլիոն դրամ, 20 հազար դոլար, ոսկեայ զարդեր եւ արժէքաւոր 6 նկարներ, ինչից յետոյ դիմել են փախուստի:

Ըստ մամուլի, ընդհանուր առմամբ դիմակաւորուած անձինք նախկին պատգամաւորի տանից տարել են մօտ 300 հազար ամերիկեան դոլարին համարժէք գումար եւ գոյք:

Ծեծի ենթարկուած Ազիզեանին եւ նրա հարազատներին տրուել են դատաբժշկի ուղեգրեր:

Յարձակում գործած անձանցից ոչ մէկին ոստիկանութեանը չի յաջողուել յայտնաբերել:

Ուշագրաւ է, որ անցած 3 ամիսների ընթացքում գրեթէ նոյն սցենարով կատարուած աւազակային 3-րդ յարձակումն է: Մասնաւորապէս, այս տարուայ Յունիսին 5 դիմակաւորուած անձինք, կրկին վաղ առաւօտեան աւազակային յարձակում էին գործել «Լինսի» հիմնադրամի ճանապարհաշինական ծրագրերի նախկին տնօրէն Էդուարդ Բեգոյեանի տան վրայ: Այս անգամ էլ դիմակաւորուած անձինք առանձնատան պարսպի վրայով մտել էին Բեգոյեանի տուն, կապել տան անդամներին, ծեծի ենթարկել նրանց, ապա վերցրել թանկարժէք իրերը, փողը, սեյֆը եւ հենց Բեգոյեանի մեքենայով էլ հեռացել: Մամուլը գրեց, որ ընդհանուր առմամբ նախկին պաշտօնեայի տանից գողացել էին 300 հազար դոլարին համարժէք գումար:

Այս փաստով եւս յարուցուեց քրէական գործ, սակայն մինչեւ օրս ոստիկանութեանը չի յաջողուել բացայայտել կատարուած յանցագործութիւնը:

Անցած ամսուայ սկզբին նմանատիպ աւազակային յարձակում տեղի ունեցաւ Մալաթիա-Սեբաստիա համայնքի նախկին թաղապետ, Կադաստրի պետական կոմիտէի պաշտօնեայ Աղուան Գրիգորեանի տան վրայ: Կրկին առաւօտեան ժամը 5-6-ի սահմաններում, դիմակաւորուած անձինք մուտք էին գործել Գրիգորեանի տուն, ծեծի ենթարկել նրան ու նրա 2 որդիներին, ապա վերցրել տան չհրկիզուող պահարանը, ոսկեայ զարդերը եւ կրկին հեռացել տանտիրոջը պատկանող BMW մակնիշի աւտոմեքենայով: Այս գործը եւս մինչեւ օրս բացայայտուած չէ:

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԸ ՀՀՇ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ Է ԳՐԵԼ



Հայաստանի նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեան

Հայաստանի նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանը դիմում է գրել Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կուսակցութիւնից դուրս գալու մասին:

Արզումանեանը 1988 թուականից մասնակցել է Ղարաբաղեան շարժմանը, ղեկավարել է ՀՀՇ տեղեկատուական կենտրոնը: 1996-1998 թուականներին Արզումանեանը Հայաստանի արտաքին գործերի նախարարն էր: ՀՀՇ-ին ֆորմալ առումով նա անդամակցել է 1998 թուականի Նոյեմբերին, երբ կուսակցութիւնն այլեւս իշխանութեան ղեկին չէր: 2000-2002 թուականներին Արզումանեանը եղել է ՀՀՇ վարչութեան նախագահ, իսկ 2008 թուականի Փետրուարին տեղի ունեցած նախագահական ընտրութիւնների ժամանակ նա գլխաւորել է Հայաստանի առաջին նախագահ եւ այդ ընտրութիւններին նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական կենտրոնական շտաբը:

«Դա արդէն իրողութիւն էր մէկ տարուց աւելի, ես բազմիցս յայտարարել եմ: ՀՀՇ-ի վերջին համագումարին, որը տեղի է ունեցել 2010 թուականի Յուլիսի 17-ին, չեմ մասնակցել, դրանից յետոյ նորընտիր վարչութիւնը անցկացրել է անդամների վերահաշուառում, որին չեմ մասնակցել եւ դրանով իսկ համարել եմ իմ անդամակցութիւնը ՀՀՇ-ին դադարեցուած», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Արզումանեանը՝ շարունակելով. - «Ուղղակի կայ ներկուսակցական ընթացակարգ, եւ եղան տարբեր մեկնաբանութիւններ, որ դիմում չի եղել ֆորմալացնելու համար, ես դիմում եմ ներկայացրել, որով վերահաստատել եմ, որ 2010 թուականի Յուլիսի 17-ից չեմ հանդիսանում ՀՀՇ-ի անդամ»:

Իր որոշումը Արզումանեանը այսպէս բացատրեց. - «Վերջին համագումարից առաջ արդէն իսկ ՀՀՇ-ի ներսում մթնոլորտը բաւականին լարուած էր, եւ այդ համագումարի նախապատրաստման աշխատանքների հետ կապուած եղել են տարբեր գնահատականներ: Նախ, իմ կարծիքով, կայ նահանջ ազատական գաղափարախօսութիւնից: ՀՀՇ-ն պէտք է լինէր ազատականութեան լոկոմոտիւը Հայաստանում: Մի շարք մարդիկ նաեւ քննադատութեան ենթարկեցին այն ձեւը, որով ձեւաւորուեց նոր վարչութիւնը, եղան ընտրութիւնները կեղծելու մէջ մեղադրանքներ:

«Փաստը, որ նման մեղադրանքներ կան, արդէն իսկ ընդունելի չէ ժողովրդավարական համարուող կուսակցութեան համար: Այդ մթնոլորտը ստիպեց, որ ես վերանայեմ իմ մօտեցումները»:

ՀՀՇ գործադիր քարտուղար Վահագն Հայոցեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այսպէս մեկնաբանեց կուսակցութիւնից դուրս գալու մասին Ալեքսանդր Արզումանեանի որոշումը. - «Դիմում է գրել, ինչպէս մեր կանոնադրութիւնն է պահանջում, քննարկել ենք, ընդունել ենք ի գիտութիւն, եւ այդ հարցը փակուած է մեզ մօտ: Աւելու կամ մեկնաբանելու այլ բան չունեմ»:

# «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ ՍՏԱՏՈՒՍ ՔՎՈՅԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ Է ԱՐՁԱՆԱԳՐՈՒԵԼ»




Պատգամաւոր Ստեփան Սաֆարեան

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանի համոզմամբ, ՀԱԿ - իշխանութիւն երկխօսութեան արդիւնքում քաղաքական դաշտում ստատուս քվոյի փոփոխութիւն է արձանագրուել, եւ առաջիկայ ընտրութիւնների շեմին Կոնգրէսը այլեւս այլընտրանք չէ իշխանութիւններին:

«Քաղաքական դաշտում ստեղծուել է հետեւեալ իրավիճակը. Հայ ազգային կոնգրէսը, որը 2008 թուականին այլընտրանք էր ընկալւում այս իշխանութիւններին, այսօր ուղղակի թէ՛ կանխատեսումների մակարդակով, թէ՛ պրակտիկ իրողութիւնների մակարդակով չի կարող ընկալուել այդպիսին», - լրագրողների հետ հանդիպմանը յայտարարեց պատգամաւորը՝ փաստարկելով. - «Որովհետեւ այլընտրանք լինում են այն դէպքում, երբ բազմաթիւ վճռորոշ հարցերում ունենում են այլընտրանքային մօտեցումներ եւ գնահատականներ»:

Ուստի, Սաֆարեանի կարծիքով, լարուածութիւն է առաջացել «երկխօսողների եւ չերկխօսողների միջեւ»:

Անդրադառնալով երկխօսութեան բովանդակութեանն ու ընթացքին՝ ընդդիմադիր պատգամաւորը հեգնեց, թէ այն վերածուել է «համապետական ընթերցանութեան երեկոյի»:

Ասուլիսին մասնակցում էր նաեւ իշխող ՀՀԿ-ի խորհրդարանական խմբակցութեան պատգամաւոր Արտակ Զաքարեանը, եւ նրա կարծիքով՝ երկխօսութիւնը «կայանում է» եւ «քաղաքական դաշտը առողջացնելու լուրջ յայտ է ներկայացնում»:

## ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԱՆՎԱՐԳԱԼԻՑ ՊԱՀՈՒԱԾՔԻ ՀԱՄԱՐ ՎՐԱՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԲԵՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿՈՒԵԼ



Հաւլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցի

Վրաստանի ոստիկանութիւնը քրէական գործ է յարուցել Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի առաջնորդարանից ստացած դիմումի հիման վրայ, ըստ որի Օգոստոսի 19-ին ազգութեամբ վրացի 2 երիտասարդներ, անսթափ վիճակում մտել են Հաւլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցի եւ յատկապէս նրանցից մէկը ագրեսիւ ու անյարգալից վերաբերմունք է ցուցաբերել հայկական եկեղեցու նկատմամբ:

«Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում վիրահայոց թեմի առաջնորդ Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանն ասաց, որ եկեղեցու հաւաքարարն ու մոմավաճառը չեն կարողացել կանխել երիտասարդների գործողութիւնները:

«Մտենում է խորանի առջեւ դրուած աւետարանին, թերթում է դա շատ ցուցադրական եւ արհամարհական կերպով եւ պատռում թերթերից մէկը: Յետոյ փորձում է մուտք գործել քահանաների սենեակ: Այդ ագրեսիւ երիտասարդը ոտքը դնում է գահի վրայ, նստում», - պատմեց Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը:

Թեմի առաջնորդը նաեւ նշեց, որ երիտասարդներն անյարգալից խօսքեր են ասել հայ եկեղեցու եւ հայութեան հասցէին: Եկեղեցուց դուրս գալիս նրանք պատռել են եկեղեցու դռներին փակցուած յայտարարութեան թերթիկները եւ ցուցադրաբար այրել դրանք: Մինչ տարածքում աշխատող շինարարները կը մօտենային, երիտասարդները նստել են աւտոմեքենայ եւ հեռացել:

Վրաստանի ոստիկանութիւնը արդէն սկսել է քննչական գործողութիւններ իրականացնել: Երիտասարդներին բերման են ենթարկել: Եկեղեցու աշխատակիցներն ու ականատեսները ցուցմունքներ են տուել: Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանն ասաց, որ այժմ արդիւնքների են սպասում:

«Մենք, ճիշդն ասած, կողմ չենք, որ այդ երիտասարդները դատուեն: Դրա կարիքը գուցէ չկայ: Բայց ուղղակի՝ ինչ-որ պէտք է, թող իրենք իրենց պատիժը ստանան, որ միւսներին էլ դաս լինի», - նշեց նա:

Վիրահայոց թեմի առաջնորդը այս միջադէպը կապում է Վրաստանում ամռան սկզբից խորացող հակահայկական տրամադրութիւնների հետ: Դրանք սկիզբ առան, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսը հովուապետական այցով մեկնեց Վրաստան, եւ առաւել խորացան, երբ Վրաստանի խորհրդարանը հայանպաստ օրէնք ընդունեց:

Հոգեւոր առաջնորդը տագնապ է յայտնում, թէ հակահայկական տրամադրութիւնները ծայրայեղութեան են հասել հասարակութեան շրջանակներում: Նոյնիսկ Վրաստանի պաշտօնական մակարդակներում վերաբերմունքի փոփոխութիւն կայ հայերի նկատմամբ:

## ՔՐԻՍՏԻՆԷ ՆԱՃԱՐԵԱՆ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԳԵՂԵՑԿՈՒՀԻ



Սերժ Սարգսեան կը շնորհաւորէ Համահայկական խաղերու գեղեցկուհի Քրիստինէ Նաճարեանին

Երուսաղէմի մարզական պատուիրակութեան անդամ Քրիստինէ Նաճարեան ընտրուած է Համահայկական 5-րդ խաղերու գեղեցկուհի:

Խաղերու փոխգեղեցկուհիներ դարձած են Վերժինէ Տէմիրճեան՝ Սթամպուլէն եւ Նարինէ Թօփքալեան՝ Պուէնոս Այրեսէն: Նշենք, որ այս մրցոյթին մասնակցած են 22 աղջիկներ:

Պուէնոս Այրեսի խումբը ճանչցուած է խաղերու լաւագոյն մարզական պատուիրակութիւն: Ռուսաստանի պատուիրակութիւնը արժանացած է մարզական բարձր ոգիի համար սահմանուած մրցանակին, իսկ Սասունի պատուիրակութիւնը ճանչցուած է Համահայկական 5-րդ խաղերու յայտնութիւն: Արդար խաղի համար մրցանակի արժանացած է Ուրմիայի մարզական պատուիրակութիւնը:

Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի՝ ՀԽՀԿ-ի փոխնախագահ Ստեփան Պետրոսեան եւ ՀԽՀԿ-ի անդամ, Ֆրանսայի Մարսէլ քաղաքի ներկայացուցիչ Հերմինէ Տիւզեան պարգեւատրուած են ՀԽՀԿ-ի յատուկ պարգեւով՝ խաղերու կազմակերպման եւ իրականացման գործին մէջ մեծ լումայ ունենալու առիթով:

Բոլոր մրցանակակիրները անձամբ պարգեւատրած է Հայաստանի Նախագահը:

## ԲԱՔՈՒԻՆ ԲԱՐԿԱՑՐԵԼ Է ԻՐԱՆՑԻ ԴԵՍՊԱՆԻ ԳՈՎԵՍՏԸ՝ ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Ադրբեջանական Aze.az լրատուական կայքի հաղորդմամբ՝ Ռուսաստանում Իրանի դեսպան Սեյէդ Ռեզա Սաջադին հանդէս է եկել «հակաադրբեջանական» յայտարարութեամբ: Այն հարցին, թէ «Ի՞նչ ազդեցութիւն ունի Լեռնային Ղարաբաղում տիրող պայթիւնավտանգ իրավիճակը հայ-իրանական տնտեսական համագործակցութեան վրայ», Սաջադին պատասխանել է. «Մեզ մօտ բնակւում է ադրբեջանական մեծ սփիւռք եւ ոչ պակաս մեծ հայկական սփիւռք, ուստի մենք պէտք է լաւ յարաբերութիւններ ունենանք մեր բոլոր հարեւանների հետ»:

«Հայաստանը եւ Ադրբեջանը մեր հարեւաններն են, եւ մենք ձգտում ենք չմիջամտել նրանց փոխյարաբերութիւններին: Նրանց հետ մենք հաստատել ենք երկկողմ յարաբերութիւններ, եւ մենք չենք խառնւում եւ չենք կապում այդ յարաբերութիւնները գոյութիւն ունեցող հակամարտութեան հետ: Բայց մենք միշտ պատրաստ ենք մասնակցութիւն ունենալ այդ հակամարտութեան կարգաւորման հարցում, եթէ այդպիսի ցանկութիւն յայտնեն Ադրբեջանն ու Հայաստանը: Մենք չենք կարող մեր հարեւաններին պարտադրել մեր կարծիքը՝ տարածաշրջանի համար կարեւոր նշանակութիւն ունեցող այդ հարցում»,- ասել է դեսպանը:

Մեկնաբանելով Շուշիի մզկիթի վերականգնումը՝ Ռուսաստանում Իրանի դեսպանը յայտարարել է. «Դա Ղարաբաղի կառավարութեան կողմից մեծահոգի քայլ է: Մենք ողջունում, խրախուսում եւ յարգանքով ենք վերաբերւում նման նախաձեռնութիւններին»:

## ԴԵՍՊԱՆԸ ՎԻՐԱՒՈՐԱԾ Է ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

ներու վերածելը հայերու համար անհուելի ցաւ է, յիշեցում՝ 1915-ի Ցեղասպանութեան հետեւանքով եղած մարդկային զոհերու եւ ոչնչացումներու մասին»,- Քլինթընին ուղղուած իր նամակին մէջ կը գրէ Պարսամեան եւ կ՛աւելցնէ, որ իր յայտարարութեամբ դեսպանը խորապէս վիրաւորած է ամերիկահայերը՝ «բանալով զգայուն վէրքերը»:

Պարսամեան այնուհետ կը գրէ, որ դեսպանը, ամենայն հաւանականութեամբ, պարզապէս անտեղեակ է որոշ փաստերէ, «սակայն երկրի պատմութեան, անոր մութ եւ վառ էջերու վարպետօրէն իմացութիւնը կարեւոր է՝ այս կարեւոր եւ բարդ տարածաշրջանին մէջ ԱՄՆ շահերուն արդիւնաւէտօրէն եւ դիւանագիտօրէն ծառայելու համար»,- կ՛ընդգծէ Պարսամեան:

Նամակի աւարտին Պարսամեան կը նշէ, որ նամակ գրելու նպատակը տարածաշրջանին մէջ ԱՄՆ-ի ջանքերուն աջակցիլն է:

## «ՂԱՐԱԲԱՂԸ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻ ՔՈՍՈՎՕ ԴԱՌՆԱԼՈՒ»

Շարունակուած էջ 1-էն

որոնք պատմականօրէն շատ խոր արմատներ ունին այստեղ»:

Ֆրանսացի պատգամաւորը Լեռնային Ղարաբաղ ժամանած է իր երեք գործընկերներուն հետ, «մօտէն ծանօթանալու Լեռնային Ղարաբաղին, աւելի լաւ պատկերացում կազմելու հակամարտութեան մասին»:

«Հայաստան այցելելով՝ մենք ցոյց կու տանք մեր բարեկամութիւնն այդ երկրի նկատմամբ, իսկ Լեռնային Ղարաբաղ այցելելով՝ մեր համերաշխութիւնը այս երկրի նկատմամբ»,- ըսած է Տասիէ:

Ֆրանսա-Լեռնային Ղարաբաղ խորհրդարանական շփումները սկսած են աւանդական դառնալ: Վերջին մի քանի տարուայ ընթացքին Ֆրանսայի խորհրդարանի պատգամաւոր Ֆրանսուա Ռոշպլուանի գլխաւորած խորհրդարանական պատուիրակութիւնը մի քանի անգամ այցելած է Լեռնային Ղարաբաղ եւ նոյնիսկ յայտնուած է Ատրպէյճանի սեւ ցուցակին վրայ:

Գի Տասիէ այս առթիւ հարց տուած է. «Ի՞նչ վատ արարք կ՛ընենք՝ այցելելով մեր բարեկամներուն: Արդեօ՞ք մենք իրաւունք չունինք այցելելու այս ազատ երկիրը եւ ազատօրէն տեսնելու մեր բարեկամները»:

**ՄԱՍԻՍ**
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

massispost.com
daily news updates

## ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆՈՒԺԵՐՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԼԻՊԻՈՅ ՄԷՋ



*Անցնող շաբթուան միջազգային կեանքի քաղաքական մեծագոյն իրադրութիւնը հանդիսացաւ Լիպիոյ մէջ բռնատիրութեան տապալումն ու ժողովրդային եւ դեմոկրատական ուժերու յաղթանակը: Արդարեւ, ամիսներ տեւող Մուամմար Կազաֆիի բռնատիրական վարչակարգին դէմ ժողովրդային ապստամբական շարժումն օրէ օր նորանոր շրջաններ եւ քաղաքներ իր հովանիին տակ առնելով յառաջ եկած էր հզօր ընդդիմադիր կազմակերպութիւն մը: Բռնակալ Կազաֆին եւ իր համախոհները չի կրցան մետասաններորդ ժամուն համախոհական նոր կառավարութիւն մը պարտադրել ժողովուրդին: Ի զուր էին նաեւ ժողովրդավարական նոր բարեփոխութիւններու արուեստակեալ խոստումները:*

*Դիւրին չեղաւ մայրաքաղաք Թրիփոլիի գրաւումը, ժողովրդային ազատագրական ուժերը քաղաքի «կանանչ հրապարակ»ը մուտք գործելով մեծ յաղթանակ մը տարած եղան: Բայց այս ազատութեան գինը շատ սուղ արժեց իրենց: Միայն Օգոստոսի 21ի դէպի մայրաքաղաք Թրիփոլի կատարուած յաղթական երթը մօտ 1300 լիպիացիներու արեան գնով եղաւ: Նոյնքան եւ աւելի քաղաքացիներ զոհ գացին վերջին երկու ամիսներու ազատագրական մարտերու ընթացքին:*

## ՔՈՒԷՅԹ, ՊԱՀՐԷՅՆ ԵՒ ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ ԻՐԵՆՑ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ԵՏ ԿԱՆՉԵՑԻՆ ՍՈՒՐԻԱԷՆ

*Սէուտական Արաբիոյ վեհապետ՝ Ապտալլա Թագաւորը իր երկրի դեսպանը ետ կանչեց Դամասկոսէն, առ ի բողոք Սուրիոյ մէջ տեղի ունեցած բռնարարքներու: Արդարեւ ան հրապարակաւ պահանջեց վերջ տալ խռովութեանց:*

*Սէուտական Արաբիոյ Թագաւորի այս յայտարարութենէն անմիջապէս ետք յաջորդաբար Քուէյթն ու Պահրէյնն ալ իրենց դեսպանները ետ կանչեցին: Այսպիսով՝ հետզհետէ կը զօրանայ միջազգային քաղաքական ճնշումը Սուրիոյ Հանրապետութեան Նախագահ Պաշշար Ասատի դէմ:*

*Միւս կողմէ կ'իմանանք թէ Ռուսիոյ դաշնակցային Պետութեան ռազմանիւթերու մասնագէտ Անաթոլի Իսայկինը իր գործակալութեան անունով յայտարարութիւն մը հրապարակելով յայտնած է թէ իր երկիրը պիտի շարունակէ ռազմամթերք հայթայթել Սուրիոյ, այս առնչութեամբ նախապէս կնքուած համաձայնագրի պայմանները յարգելու համար:*

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳԱՂՏՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ

*Վերջերս Հիւսիսային Քորէայի ղեկավար Գիմ Ճոնկ Իլ, շոգեկառքով գաղտնի ուղեւորութիւն մը ունեցաւ դէպի արեւելեան Ռուսիա եւ խսակցութիւններ ունեցաւ Նախագահ Մետւետեւի հետ: Ռուս եւ Հիւսիս Քորէական սոյն գագաթնաժողովի ընթացքին զոյգ ղեկավարները միասնաբար քննարկեցին քաղաքական եւ տնտեսական հարցեր: Խորհրդակցութեանց նիւթ դարձաւ նաեւ զոյգ Քորէաներու միջեւ լարուածութեան մեղմացման եւ այս առնչութեամբ վեց երկիրներու միջազգբային հաշտարար յանձնախումբի գործունէութիւնն աշխուժացնելու հարցերը:*

*Զոյգ Նախագահներու միջեւ գոյացած համաձայնութենէն ետք՝ այս օրերուն Հիւսիսային Քորէա կ'այցելէ ռուսական զինուորական պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ Ալեքսանդր Կոլթսի:*

## 50 ՄԵՌԵԱԼ ՓԱՔԻՍՏԱՆԻ ՄԶԿԻԹԻ ՄԸ ՄԷՋ

*Փաքիստանի մզկիթներէն մէկուն մէջ ռամատան ամսուան ընթացքին կատարուած հաւաքական աղօթքի պահուն, անձնասպանական արարքի մը հետեւանքով ռումբ մը պայթելով՝ 50 հոգիի մահուան եւ հարիւրաւոր ուրիշներու վիրաւորուելուն պատճառ հանդիսացաւ:*

*Նոյնանման անձնասպանական արարքով 8 հոգիներ մեռան Աֆղանիստանի մայրաքաղաք Գապուլի մէջ:*

## ԻՍՐԱՅԷԼ ՑԱՒ ԿԸ ՅԱՅՏՆԷ...

*Անցեալ Շաբաթ օր Եգիպտոսի ապահովութեան ուժերէն հինգ անձեր սպաննուած էին իսրայէլացիներու կողմէ սահմանամերձ շրջանի մը մէջ: Այս առթիւ Եգիպտական կառավարութիւնը ետ կանչած էր Իսրայէլի մօտ իր դեսպանը: Այս պատահարի իբրեւ արդիւնք Իսրայէլի պաշտպանութեան Նախարար Եէհուտ Պարաքը ցաւ յայտնած է եգիպտացի անվտանգութեան ծառայողներու մահուան առթիւ:*

## ԼԻՊԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

*ՍԱՄՈՒԷԼ ԱՒԱԳԵԱՆ*

*Թէեւ Լիպիայի տնտեսութիւնը համաշխարհային տնտեսութեան մէջ նշանակալից դերակատարում չունի, այս երկրում սպասուելիք քաղաքական փոփոխութիւնները էական ազդեցութիւն կարող են ունենալ համաշխարհային տնտեսութեան վրայ: Առաջին՝ կ'էժանանայ նաւթը, երկրորդ՝ ժամանակաւորապէս կը կայունանան համաշխարհային բորսաները:*

*Լիպիան նաւթի պաշարներով Աֆրիկայում ամենահարուստ պետութիւնն է: Հենց միայն Թրիփոլիի գրաւումը ազդակ եղաւ, որ միջազգային շուկաներում նաւթն էժանանայ: Սա այն դէպքում, որ Լիպիան նոյնիսկ կառավարութեան փոփոխութիւնից ու կայունացումից յետոյ դեռ երկար ժամանակ չի կարող վերականգնել նաւթի արտահանման մինչ պատերազմական ծաւալները: Մինչ 2009 թ. Լիպիան արտահանում էր օրական 1.5 մլն բարել նաւթ, իսկ ներկայում առաւելագոյնը հնարաւոր է 500 հազար բարել: Սակայն մասնագէտներն այն կարծիքին են, որ նաւթի մատակարար երկրներից մէկում անորոշութիւնների վերացումն արդէն իսկ դրական գործօն է: Նաւթի միջազգային գինն անշեղօրէն մօտենում է 1 բարել/80 տոլար մակարդակին, ու չի բացառւում, որ աւելի էժանանայ:*

*Արեւմուտքի համար յաղթական ելք ունեցող ցանկացած պատերազմ դրական է անդրադառնում բորսայական ցուցիչների վրայ: Այդպէս եղաւ Իրաքի կամ Աֆղանական պատերազմների արդիւնքում: Թէեւ լիպիական պատերազմը ֆորմալ առումով քաղաքացիական է, բոլորն էլ հասկանում են, որ Քազաֆիի պարտութիւնը ՆԱՏՕ-ի ձեռքի գործն է: Տարբեր հեռուստաալիքներով ցուցադրուող կադրերը անթաքոյց վկայում են, թէ որքան անկազմակերպ ու անկարգապահ են Թրիփոլին գրաւող ապստամբական ուժերը: Ուստի միջազգային շուկաները Քազաֆիի անկումը իրաւամբ կարող են դասել գերտէրութիւնների օգտին: Իսկ դա նշանակում է ամերիկեան ու եւրոպական ռազմարդիւնաբերական ընկերութիւնների հեղինակութեան բարձրացում: Դրանց արժեթղթերը կ'աճեն, իսկ պատուէրները կ'ընդլայնուեն:*

*Հայաստանի համար, ի հարկէ, առանցքային նշանակութիւն ունի նաւթի գինը: Որպէս էներգակիր ներմուծող երկրի՝ մենք շահագրգռուած ենք նաւթի էժանացմամբ, որովհետեւ դա դրական կ'անդրադառնայ մեր արտաքին առեւտրի հաշուեկշռի վրայ: Բացի այդ՝ Ատրպէյճանի տնտեսական հզօրութիւնը մեծապես հիմնուած է էներգակիրների արտահանման վրայ, հետեւաբար՝ նաւթի էժանացումը նշանակում է ոչ բարեկամ երկրի ֆինանսական վիճակի վատթարացում: Բայց կայ նաեւ խնդրի միւս կողմը: Նաւթը մեծ նշանակութիւն ունի նաեւ Ռուսաստանի համար: Ռուս փորձագէտների կարծիքով՝ ռուսական տնտեսութիւնը բարդութիւններ կ'ունենայ այն դէպքում, եթէ նաւթի գինը 80 տոլարից պակաս լինի: Եթէ նաւթի բարելն արժենայ, օրինակ, 50 տոլար, ապա Ռուսաստանում գնաճը կը կազմի առնուազն 20 տոկոս, իսկ ռուսական ռուբլին էապէս կ'արժեզրկուի: Իսկ սա կը հարուածի Ռուսաստանում աշխատող մեր հայրենակիցների գրպանին, կը նուազեն տրանսֆերտները եւ ռուսական ներդրումները Հայաստանում: Իսկ դա ժամանակաւորապէս ֆինանսական անկայունութիւն կը ստեղծի նաեւ մեր հանրապետութիւնում:*

## ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՍՏԻՊՈՒԱԾ ԵՆ ԱՄԷՆ ՕՐ ԿՐԿՆԵԼ ՈՐ ԻՐԵՆՔ ԹՈՒՐՔ ԵՆ

*Թրքական «Հիւրիէթ» թերթին համաձայն Թուրքիոյ ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչները կը քննադատեն այն փաստը որ նախակրթարանի բոլոր երեխաները, ամէն առաւօտ ստիպուած են երգել «Մեր խոստումը» երգը, սակայն կը վախնան ձայն բարձրացնել այդ մասին:*

*Այս փաստը կը քննադատուի նաեւ Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն Կուսակցութեան կողմէ, որ կը պաշտպանէ քրտական փոքրամասնութեան շահերը: Այս առթիւ հայ եւ յոյն համայնքներու ղեկավարները կ'ըսեն թէ իրենք հնարաւորութիւն չեն ունենար իրենց կարծիքը արտայայտելու, ինչպէս քիւրտերը:*

*Երեխաները կ'ըսեն թէ իրենք ամէն օր ստիպուած են կրկնել որ իրենք թուրք են, չի նայած որ այդպէս չէ:*






# ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀԵԱՆԻ ՀԱՄԱԶԱՅՆ՝
# «ՊԷՏՔ ՉԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԵԼ ՈՐՊԷՍ ՀՊԱՏԱԿՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՊԷՏՔ Է ԽՈՒԶԵԼ, ԿԹԵԼ»

*ԵՐԱՆՈՒՀԻ ՍՈՂՈՒԵԱՆ*



«Իհարկէ կայ արտագաղթ, - այն արդէն վտանգաւոր չափերի է հասնում»,-ասում է Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանը:- Հիմա չեմ յիշում, թէ որ կազմակերպութիւնն էր ասել վերջերս, որ դա համազգային աղէտ է, ու ես համամիտ եմ այդ մտքի հետ: Այո, դա համազգային աղէտ է: Անգամ BBC-ով էդպիսի մի նիւթ գնաց, որ գիւղերը դատարկւում են, միայն կանայք են մնացել, եւ այդ կանանց ամուսինները օտար երկրներում երկրորդ ընտանիքն ունեն: Սա նոյնպէս անհանգստացնող հանգամանք է, սա էլ իր տեսակի մէջ է աղէտ:

Ոչ միայն Գիւմրին է դատարկւում, գիւղերն արդէն դատարկուած են, փաստում է Սրբազան հայրը, որ իր հովուական պարտքն է համարում գրեթէ ամէն կիրակի լինել մարզի գիւղական համայնքներում: Թեմի առաջնորդի կարծիքով՝ բնակչութեան նօսրացումն անզէն աչքով էլ է նկատելի:

«Վերջերս Գիւմրիում մի թուրք տուրիստ, իմանալով, որ թեմի առաջնորդը թրքերէն է խօսում, այցելեց ինձ: Պարզուեց, որ այս մարդը երկար տարիներ է ապրում է Մոսկուայում, ու խօսքի մէջ նշեց, թէ այնտեղ «խոպան» գնացած բոլոր հայերն ունեն երկրորդ ընտանիք: Ես վատ զգացի, որովհետեւ նոյնիսկ թուրքի պատկերացումներն են հայի մասին փոխուել: Մեր հայ ընտանիքների պատկերն է աղաւաղուել: Թուրքը միշտ իմացել է, որ հայը բարոյականութեան չափանիշ է, իսկ այսօր լրիւ այլ կերպ ենք ներկայանում: Սա համազգային աղէտ չի՞, ինչ է»,-մտահոգւում է Միքայէլ Սրբազանը:

«Եւ երբ այս մասին խօսում ես, անմիջապէս ելնում է մէկը եւ յայտարարում, թէ հոգեւորականը, փոխանակ լաւատեսութեամբ լաւ բանի մասին խօսի, վատ բաներից է խօսում, փոխանակ լաւատեսութիւն ներշնչի՝ յոռետեսութիւն է ներշնչում: Անպայման կը գտնուի մէկը ձեր ընթերցողներից, որ սա կարդալիս կը յայտարարի, թէ Սրբազանի տուեալները չեն համապատասխանում իրականութեանը, չկայ արտագաղթ, ահագնացող չեն չափերը, ամէն ինչ նորմայի սահմաններում է եւ այլն: Բայց այդ մարդիկ մոռանում են, որ մենք պատասխանատու ենք մեր հօտի ամէն մի անդամի համար, որ մենք եւս պարտաւոր ենք հոգ տանել նրանց մասին, որ մեր սիրտը ցաւում է ամէն մի հեռացողի համար, ու մենք իրաւունք չունենք լռելու»,-նշում է հոգեւոր հայրը:

«Չի գնում նա, ով հնարաւորութիւն չունի, եւ նա ով ապահովուած է, այսինքն՝ հնարաւորութիւն ունի իր գլուխն այստեղ էլ պահելու, եւ շարունակում է իր դիտարկումները թեմի առաջնորդը:- Եւ մեղադրել գնացողներին մի տեսակ չի ստացւում: Հացի խնդիր կայ: Օրինակ՝ Շիրակի թեմում առկայ հաստիքացուցակն ուռճացուած է, ու մենք այդ քայլին գնացել ենք գիտակցաբար: Թէպէտ բարձր չէ վարձատրութիւնը, եւ իր էութեան մէջ տուեալ մարդու գործն էլ ոչ այնքան անհրաժեշտ, բայց մենք այդպիսով փորձում ենք նրան կապել այս քաղաքին, որ չհեռանայ, ընտանիքը չլքի: Եւ ես շատ յաճախ քննադատութեան եմ արժանանում, թէ «Սրբազան, աւելորդ մարդկանց ես պահում»: Ես դա գիտեմ, բայց նաեւ գիտեմ, որ այդ մարդը գնալու տեղ չունի, որ այդ մարդը ընտանիք է պահում»:

Միքայէլ Սրբազանի կարծիքով՝ խնդիրը կառավարումն է: Ժողովրդի մի զգալի հատուած իր ապագան կապում է դրսի հետ: Իշխանութիւններն իրականացնում են «Արի տուն» ծրագիրը, բայց դրա փոխարէն արժէր, որ տնեցիներին պահէին տանը: Հարեւան Վրաստանի նախագահի մասին ասում են, որ ծամում է փողկապը, բայց դա չի խանգարում նրան բարեփոխումներ կատարելու: Թեմի առաջնորդը համոզուած է, որ պէտք չէ ջայլամի քաղաքականութիւն որդեգրել, միայն դրական բաներից խօսելով՝ հնարաւոր չէ առկայ խնդիրը լուծել:

«Ինչու հարեւան պետութիւնում հնարաւոր է ամէն բան փոխել, իսկ մեզ մօտ՝ չէ: Մեր ժողովուրդը յարմարուող է: Այսօր նրա առաջ խնդիր է դրուած գնալ 9 ամսով խոպան ու վերադառնալ, ինքը գնում է, այսինքն՝ յարմարուել է այդ վիճակին: Եթէ հային հրամցուի լաւը, ինքն անպատճառ դրան կը յարմարուի: Հասարակ բան. ասացին մի կէս բերան, որ պիտի ամրագոտիներ կապեն, բոլորը կապեցին,- ասում է Միքայէլ Սրբազանը:- Կը նշանակի՝ ցանկութիւն է պէտք, կամք է պէտք բացասականը դրականի փոխելու:

Հարկային տեռորը թուլացնել է պէտք: Վրաստանում այսօր խորհրդային արտադրութեան մեքենայ չկայ, չես տեսնի, որովհետեւ այդ երկրի իշխանութիւնն այնպէս է արել, որ իր երկրի բնակիչը կարողանայ շատ հեշտութեամբ արտասահմանեան մեքենաներ ներկրել՝ առանց 30 տոկոս հարկ վճարելու: Բարձր հարկեր սովորաբար դրւում են ներկրողի վրայ: Երբ դու այդ ապրանքից քո երկրում արտադրում ես, դրանով պաշտպանում ես քո արտադրողին, խթանում քո ներքին շուկան: Բայց մի՞թէ մենք մեքենայ ենք արտադրում:

10 տարի առաջ, երբ մտնում էիր Վրաստան, Վրաստանը քեզնից հետ էր, այսօր մտնում ես Վրաստան, քեզանից մի քանի քայլ առաջ է: Ու հաւատացէք, որ դրա պատճառը ոչ ծովն է, ոչ էլ տուրիզմը: Սրանով ուզում եմ ասել, որ պէտք չի ժողովրդին վերաբերուել որպէս հպատակների, որոնց անպատճառ պէտք է խուզել, կթել: Պէտք է սիրել, հոգալ մարդկանց մասին առանց «փայ» պահանջելու»:

## 21 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒԵՑ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ




Օգոստոսի 23-ին լրանում է Հայաստանի Անկախութեան հռչակագրի ընդունման 21 տարին: Ուղիղ 21 տարի առաջ Հայկական ԽՍՀ Գերագոյն խորհրդի կողմից ընդունուեց Հայաստանի Անկախութեան հռչակագիրը, որով սկիզբ դրուեց անկախութեան գործընթացին: Անկախութեան հռչակագրով Հայկական ԽՍՀ-ն վերանուանուեց Հայաստանի Հանրապետութիւն (կրճատ՝ Հայաստան), իսկ յաջորդ օրը՝ Օգոստոսի 24-ին ընդունուեց դրօշի մասին օրէնքը, որով Հայաստանի պետական դրօշ ճանաչուեց եռագոյնը:

1990-ի Օգոստոսի 23-ին Գերագոյն Խորհրդի նիստում Անկախութեան հռչակագրի տեքստը կարդաց Արամ Մանուկեանը, որպէս առաջին հանրապետութեան հիմնադրի անուանակից:

Իսկ արդէն մէկ տարի անց՝ 1991-ի Սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցաւ անկախութեան հանրաքուէ, որի մասնակիցների 94,99 տոկոսը կողմ քուէարկեց Հայաստանի անկախութեանը:

Հռչակագիր Հայաստանի անկախութեան մասին.

Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը՝ արտայայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատուութիւնը հայ ժողովրդի ճակատագրի առջեւ համայն հայութեան իղձերի իրականացման եւ պատմական արդարութեան վերականգնման գործում, ելնելով մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից եւ միջազգային իրաւունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքը, հիմնուելով 1989 թուականի Դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի համատեղ որոշման վրայ, զարգացնելով 1918 թուականի Մայիսի 28-ին ստեղծուած անկախ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդավարական աւանդոյթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրաւական հասարակարգի ստեղծումը,

Հռչակում է անկախ պետականութեան հաստատման գործընթացի սկիզբը:

Ա. Հայկական ԽՍՀ-ն վերանուանւում է Հայաստանի Հանրապետութիւն՝ կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետութիւնն ունի իր դրօշը, զինանշանը եւ հիմնը:

Բ. Հայաստանի Հանրապետութիւնը ինքնիշխան պետութիւն է՝ օժտուած պետական իշխանութեան գերակայութեամբ, անկախութեամբ, լիիրաւութեամբ: Հայաստանի Հանրապետութեան ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը եւ օրէնքները:

Գ. Հայոց պետականութեան կրողը Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդն է, որն իր իշխանութիւնը իրագործում է անմիջականօրէն եւ ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան եւ օրէնքների հիման վրայ: Հանրապետութեան ժողովրդի անունից հանդէս գալու իրաւունքը պատկանում է բացառապէս Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհրդին:


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**

**Address: ---------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: ------------**

**Tel :----------------------- Fax : ------------------------**

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԷԼԵԱՆԻ ՀԵՏ

ԶՐՈՒՑԵՑ
ՍՈՒՍԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ



*Հերթական այցով Հայաստանում էր ազգային, հասարակական, գրական, մշակութային եւ եկեղեցական գործիչ, գրող-հրապարակախօս, հայ բարերար եւ մեծ մտաւորական Ասատուր Կիւզելեանը Լոնտոնից: Զարմանալի մարդ, վառ անհատականութիւն: Նրա բովանդակալից կեանքի պատմութիւնը կարող է հազիւ տեղաւորուել տասնհատորեակի մէջ: Բաւական է նշել նրա մտերմութիւնները Պարոյր Սեւակի, Նայիրի Զարեանի, Յովհաննէս Շիրազի, Վահագն Դաւթեանի, Սիլվա Կապուտիկեանի, Համօ Սահեանի, Հրաչեա Ղափլանեանի, Հենրիկ Մալեանի, Ուիլիըմ Սարոյեանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ի, Արամ Խաչատրեանի, Առնօ Բաբաջանեանի, Պաւել Լիսիցիանի, Գոհար Գասպարեանի, Լուսինէ Զաքարեանի, Վիկտոր Համբարձումեանի, Լեւոն Հախվերդեանի, Սարա Ջերչիլի՝ Անգլիայի յայտնի վարչապետ Ուինսթոն Ջերչիլի դստեր հետ... Այս ցանկը խիստ համառօտ է: Այս անգամ նրան հայրենիք էր բերել «Թերթելով մամուլը» իր հերթական գրքի շնորհանդէսը: Կիլիկիա, Լիբանան, Հնդկաստան՝ Կալկաթա, Անգլիա՝ Լոնտոն... Գիրքը ներառում է հնդկահայ եւ բրիտանահայ գաղթօճախների հասարակական, քաղաքական եւ մշակութային կեանքը, քանզի հեղինակն ապրել եւ գործել է նշուած երկրներում: Լինելով Լոնտոնում հրատարակուող «Արեգակ» եւ «Լոնտոն» հայկական ամսաթերթերի գլխաւոր խմբագիր եւ հրապարակախօս, քաջատեղեակ լինելով հայկական գաղթօճախների ներքին կեանքին՝ գրքում լաւագոյնս մէկտեղուել են Ասատուր Կիւզելեանի հրապարակումներն ու հարցազրոյցները, ինչպէս նաեւ տեղեկատուական բնոյթի յօդուածները: Բազմաժանրութեամբ աչքի ընկնող հեղինակը աչքի է ընկնում հայրենագիտութեան, հայ ժողովրդի եւ եկեղեցու բազմադար պատմութեան, ինչպէս նաեւ բազմաշերտ հայ գրականութեան իմացութեամբ: Գիրքը նաեւ հեղինակի կէսդարեայ ստեղծագործական, հասարակական, ազգանպաստ գործունէութեան գեղեցիկ տարեգրութիւն է: Ասատուր Կիւզելեանը սիրով բացառիկ հարցազրոյց տուեց Armedia գործակալութեանը:*

-Բարի վերադարձ հայրենիք, պր-ն Կիւզելեան: Այս անգամ, նոր գի՞րքը բերեց Ձեզ Հայաստան, թէ՞ Դուք այն բերեցիք հայրենիք:

*-Երբ երկար ժամանակ հեռու եմ մնում հայրենիքից, «կռնակս քոր է գալիս»: Այդ ժամանակ ճամպրուկս հաւաքում ու գալիս եմ Հայաստան: Այցիս բուն նպատակը գրքի շնորհանդէսն էր: Այստեղ ունեմ ընկերների լայն շրջանակ: Ես Հայաստանի երիտասարդների «հօրեղբայրն» եմ կամ «կնքահայրը», բոլորն ինձ «հոպար» կամ «քաւոր» են ասում: Գալիս եմ իրենց տեսնելու, հայրենիքի կարօտը առնելու եւ վերադառնալու Լոնտոն:*

-Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները դիտարկելու բազմամեայ փորձ ունէք՝ կէս դարից աւելի: Ի՞նչն է փոխուել, եթէ իրականում փոխուել է՝ մարդիկ, յարաբերութիւնները... ի՞նչն է հիասթափեցնում Ձեզ, ի՞նչն է ուրախութիւն պատճառում:

*-Մարդու բնաւորութիւնը հիմնականում մնում է անփոփոխ: Բայց հանգամանքները, տնտեսական իրավիճակը (դուք սոցիալական էք ասում, մենք՝ ընկերային), զանազան պարագաներ մարդուն փոխում են: Դժբախտաբար, սովետական վարչակարգից դէպի ժողովրդավարութիւն անցնելու այդ գործընթացը, շատ դժուարութիւններ է առաջ բերել: Դա բնական է. բոլոր երկրներում լինում է: Այդ դժուարութիւնները ազդում են մարդկային յարաբերութիւնների վրայ: Օրինակ՝ խորհրդային շրջանում դպրոցը ձրի էր, բժշկութիւնը ձրի էր, էլեկտրականութիւնը, գազը էժան էին, անգործ մարդ չկար... Ճիշտ է՝ մենատիրական փիլիսոփայութիւն էր, եւ ստիպուած էիր գիջել ազատութեան սկզբունքներին, բայց կային ե՛ւ դրական, ե՛ւ բացասական կողմեր: Մարդը միշտ էլ, ամէնից զատ, ուզում է տեսնել իր երեխաներին ժպտացող, չի ուզում երեխան քաղցած լինի: Բայց հիմա դժուարին շրջան ենք անցկացնում: Այդ բարդութեան վրայ աւելացել է Հայաստանի շրջափակուած լինելը. Թուրքիայի եւ Ատրպէյճանի սահմանները փակ են, միակ անցքը, որ ունենք, մի փոքրիկ կամուրջ դէպի Պարսկաստան եւ դէպի Վրաստան: Սփիւռքահայութիւնը մեծ ներդրում ունի դրա մէջ: Ես միշտ ասում եմ՝ այլեւս ժամանակն է, որ մտածենք իբրեւ պետականութիւն ունեցող ժողովուրդ: Այլեւս սփիւռքահայութեան համար ընդունելի չէ մտածել որպէս առանձին հատուած: Ամէնից առաջ հայ ժողովրդի գերագոյն շահերի մասին պիտի մտածենք եւ միասնաբար աշխատենք: Միասնաբար աշխատելով՝ այդ դժուարութիւնների մեծ մասը կարող ենք յաղթահարել:*

-Այլ կերպ ասած՝ հիմա առաջուանը չէ:

*-Ժամանակին, երբ հրաւիրւում էի Սովետական Հայաստան, այնքան հոնորար էի ստանում, որ կարող էի մի քանի աւտոմեքենայ գնել: Այսօր Հայաստանում գրականութիւն չկայ, որովհետեւ գրողին չեն վճարում: Գրողը ընտանիքի հոգսերով է տարուած: Ո՞նց կարող է մէկը ստեղծագործել, երբ ինքը առաւօտ-երեկոյ մտածում է՝ ընտանիքս ո՞նց պիտի պահեմ: Դրա համար մեր գրականութիւնը, մեր արուեստները, արուեստների մակարդակը շատ է ցածրացել, եւ այսօր չունենք այն գրողները, որոնք ունէինք սրանից, ասենք, 30-40 տարի առաջ:*

-Բայց չէ՞ որ գրողը նա չէ, ով կարողանում է գրել, այլեւ նա է, ով չի կարող չգրել:

- Երանի ձեզ, որ բարձրաձայն կարողանում էք ասել՝ հայ ենք, Հայաստանում ենք ապրում:

Մենք՝ այդ տարիների Երեւանի պիոներների պալատի գրական խմբակի կարմիրվզկապաւոր սաներս, նրանց ակնածանքով լսում ու ասածների իմաստը չէինք հասկանում: Բայց տուն հասնելուն պէս՝ նրա, Աւետիք Իսահակեանի խօսքերը բառ առ բառ նոթատետրերում գրառում, մասունքի նման պահպանում էինք: Հիմա թերթում եմ այդ գրառումներն ու մտածում, թէ որքան երջանիկ են մեր օրերի հայ երեխաները, որոնք ոչ միայն կարողանում են ասել, որ հայ են ու ապրում են Հայաստանում, այլեւ հպարտանում են (իրաւամբ) մեր վերականգնուած պետականութեամբ, Արցախ լեռնաշխարհի ազատագրութեամբ ու հանդէս են գալիս անժամկէտանց պահանջատիրութեամբ:

Բայց գիտակցո՞ւմ են արդեօք իրենց երջանկութիւնը:

Եթէ անգամ գիտակցում են, չեն կարեւորում:

Ո՞վ պիտի այսօրուայ դեռահասին բացատրի, թէ հազարամեակների խուժդուժ բռնատիրութիւններից յետոյ ինչ է մեզ համար ազգային պետականութեան վերականգնումը, Արեւմտահայաստանի, Կիլիկիայի կորուստներից յետոյ՝ Արցախի ազատագրումը, ազգային բանակը: Ու յատկապէս այն պարտականութիւնն ու պարտաւորութիւնը, որ նա ունի, պէ՛տք է ունենայ պետականութեան, պաշտպանունակութեան ամրապնդման, մեր յետագայ նուիրական նպատակների իրականացման ասպարէզներում:

Միջավայրը: Ծնո՞ղը: Դպրո՞ցը:

Միջավայրը, ցաւօք, մեզ բոլորս ծանօթ է, ուստի շատ աւելի ճիշտ կը լինի, եթէ այսօրուայ դեռահասը ընդհանրապէս փողոց չ՚ելնի, շրջապատին չ՚առնչուի: Բաւական է նա բակ իջնի, որպէսզի ականատես լինի, թէ ինչպէս է տնանկ մը ծերունի քչփորում աղբարկղերը, ու նոյն պահին շքեղ ինքաշարժերի (անպայման սեւ գոյնի) թափոր շչակների չտես ճիչերով ուղեկցում է... դուք ինձից լաւ գիտէք, թէ ում: Այդ դեռահասը, Երեւանի որ փողոցում ուզում է ապրի, եթէ մի քանի քայլ էլ անի, կը հանդիպի նամակատան առջեւ ժամերով իրենց խղճուկ թոշակներին սպասող տարեցների ու շքեղաշուք զուարճատների, որտեղ լսել է, թերեւս նաեւ տեսել՝ նոյն պահին միլիոններ են հոսում, յորդում:

Նման, մեղմ ասած, հակասական մթնոլորտը կարո՞ղ է հայրենանուէր սերունդ դաստիարակել: Հազիւ թէ:

Ուրեմն՝ ծնողը:

«Ջուարթնոց» ուղեւորուող երթուղայինները մեր շէնքի առաջ էլ են կանգնում, ու ես յաճախ եմ օդանաւակայան գնում: Սիրտս ճաքում է: Մի՛ հաւատացէք պաշտօնական վիճակագրութեանը, այժմ, Հայաստանից ծնողները ոչ թէ ընտանիքներով, գերդաստաններով, գիւղերով են՝ իրենց բառով ասած՝ փախչում: Եւ այլ եթէ նկատի ունենանք, որ հենց պաշտօնական վիճակագրութեամբ մեր իսկ երկրում ժողովրդագրական բնական աճի վտանգաւոր անկում է արձանագրւում, դժուար չէ պատկերացնել, թէ զանգուածային գաղթը ինչ մռայլ հեռապատկեր է ուրուագծում: Մինչեւ անգամ երբեմն ինձ թւում է՝ Ատրպէյճանի ալիեւները դիտմամբ են ձգձգում բանակցութիւնները, որովհետեւ շատ լաւ տեսնում են, թէ առանց իրենց սադրանքների էլ ինչպէս ենք մենք ինքնակամ դատարկում մեր երկիրը: Շեշտեմ՝ յաղթանակած երկիրը: Բայց դա ինչպէ՞ս բացատրես հայէլեկտրագործարանի նախկին բարձրակարգ փականագործին, որը հեռուստահաղորդումներից քեզ ճանաչում, դէմքդ յիշում ու ասում է.

- Պարոն Ջանիկեան, ինձ համար ձրի գործ գտի, հենց հիմի ընտանիքս վերցնեմ, հետ՝ տունս մտնեմ: Էլի եմ ասում՝ ձրի աշխատեմ, մենակ աշխատեմ: Ինչ է՝ մինչեւ մեռնելս էլ բանի պէտք չե՞մ, պիտի մեր շէնքի տաղաւարում նստեմ, բլոտ բաժանե՞մ:

Ինչ պատասխանես մի ուրիշ ծնողի՝ Էջմիածնի Արշալոյս գիւղի տոհմիկ հողագործին, որն ուղղակի է հարցնում.

- Իմ օգուտը մի կողմ եմ թողնում: Եթէ իմ աճեցրած բանջարեղէնի բոլոր՝ ջրի, պարարտացման, փոխադրման, միւս ծախսերն ու հարկերը հաշուեմ, քո վրայ պիտի հազար դրամով ծախեմ: Ասա՝ կառնե՞ս:

Ես ի հարկէ, փորձում եմ նրանց հասկանալ, բայց նայում եմ օդանաւակայանի սպասասրահում լխվլացող երեխաներին ու մեկնում եմ: Ուզում եմ հրովարտակով, թէ բռնի ուժով նրանց ծնողներից խլել, տուն վերադարձնել: Պատերազմն ախր դեռ չի աւարտուել: Բայց եթէ իրօք նման մոգական ուժ, կարողութիւն էլ ունենամ, ո՞վ պիտի հայրենասիրութեան, անձնազոհութեան գաղափարով դաստիարակի այդ նոյն դեռահասին, որ վաղը զէնքով պաշտպանի իր իսկ բարեկեցիկ տնտեսութիւնը քայքայած, ծնողներին գաղթական դարձրած իրականութիւնը:

Դպրո՞ցը: Ի հարկէ՝ դպրոցը: Մեր ուսումնական հաստատութիւններում արհեստավարժ մանկավարժեր՝ մասնագէտներ են աշխատում, որոնց կոչումը հենց դա է: Աւելի ճիշտ՝ պիտի լինի:

Այսօրուայ մեր 20 տարեկանները անկախութեան հետ ծնուեցին, որբութիւն, անլոյս գիշերներ ու անկրակ ձմեռներ տեսան, դպրոց չգնացին, եթէ անգամ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ աւարտեցին, ոչինչ չսովորեցին: Նախ, որ սովորելու հնար չկար եւ յետոյ, ջահել էին, նայում էին իրենց շուրջն ու համոզւում, որ լաւ ապրելը կրթութեան, իմացութեան, գիտելիքների հետ ոչ մի առնչութիւն չունի:

Յետոյ Հայաստանի պետականութիւնը ճանապարհ անցաւ, կայունացաւ, նորընծայ պաշտօնեաներ յայտնուեցին, որոնք կարծեցին, թէ նորը ստեղծելու համար հինը անպայման պէտք է քանդել: Նրանք հինը յաջողութեամբ քանդեցին ու նոյն յաջողութեամբ նորը չստեղծեցին: Չկարողացան: Մինչեւ հիմա էլ չեն կարողանում: Շատ լաւ հասկանալով հանդերձ, որ նորութիւն չեմ ասում, յայտնի ճշմարտութիւնը կրկնում եմ, որովհետեւ չեմ ուզում այսուհետեւ էլ իմ, ձեր, մեր ազգի երեխաները փորձադաշտ դառնան՝ միջին ու աւագ դպրոցների անհեթեթ տրոհումներով, օտարալեզու կրթութեան անհեռանկար համակարգերով, յայտնի չէ, որ կիսագրագէտի գրպանն ուռճացնելու համար անընդհատ փոխուող, բայց միեւնոյնն է, գիտելիք չհաղորդող դասագրքերով:

Ով ուզում է իմանալ դպրոցական՝ այսպէս կոչուած բարեփոխումների արդիւնքները, թող մի օր հետս զօրամաս գայ: Նստի կողքիս, մտերմիկ զրուցի հայ զինուորի՝ 18-20 տարեկան պատանու հետ (ինչպէս սփիւռքահայերն են ասում՝ բացառութիւնները միշտ յարգելի են) եւ իմանայ, որ Վարդան Մամիկոնեանը նահատակուել է Տէր Էլ Զօրի անապատում, Անդրանիկ զօրավարը մարտնչել է Արցախի հերոսամարտում, Գարեգին Նժդեհը՝ ոնց որ թէ... ոնց որ թէ...

Եթէ վիճակը այսպիսին ու նոյնիսկ վատթար չլինէր, Պաշտպանութեան նախարարութիւնը հայրենիքի պաշտպանութեան կարեւորագոյն առաքելութեանը զուգընթաց հայրենագիտական ձեռնարկներ չէր ստեղծի, նորակոչիկին չէր սովորեցնի այն, ինչ դպրոցում պիտի սովորած լինէր: Իսկ հայ զինուորի համար հայոց պատմութիւնը, յատկապէս հերոսապատումը սերտելը չափազանց կարեւոր է, որովհետեւ նա սովորական ծառայութիւն չի կատարում, ամէն օր, օրուայ բոլոր ժամերին կանխում է հակառակորդի դաւերն ու ոտնձգութիւնները, ուղղակի ասենք՝ չյայտարարուած պատերազմ է մղում:

Արցախի հերոսամարտի մասնակիցները հիմա արդէն խոստովանում են, որ իրենց ուսապարկերի ամենաապահով անկիւններում հարազատների նամակների ու լուսանկարների հետ հայոց պատմավէպերն են թաքցրել, որոնք բարձրաձայն ընթերցել են հրադադարի հպանցիկ պահերին, որովհետեւ օրհասական պահերին սատար են եղել, պայքարի մղել, յաղթանակի ոգեկոչել:

Աւաղ, անցան այդ ժամանակները: Հիմա ոչ միայն զինուորական գետնագնակներում, դպրոցականների գրասեղաններին անգամ գիրք դժուար է գտնել: Պատճառը դարի նորամուծութիւնը՝ համակարգիչն է, որով այնքան պարծենում են դպրոցական ոլորտի ղեկավար այրերը: Ինչ խօսք, համակարգիչը ժամանակի մեծագոյն ձեռքբերումն է ու ոչ մի մեղք չունի, որ մեր հանրապետութիւնում այն չեն հայկականացնում, ազգային բովանդակութիւն եւ ուղղուածութիւն չեն հաղորդում: Ինչ մանրամասնեմ՝ յայտնի է, թէ համակարգչի առաջ նստած մեր երեխաներն ու պատանիները ժամերով ինչով են տարւում: Բանը հասել է այնտեղ, որ նրանք իրենց հասակակիցների յղած համացանցային նամակներն անգամ լատինատառ հայերէնով են գրում: Նման մտայնութեամբ ի հարկէ ազգային դաստիարակութեան, մայրենի լեզուի իմացութեան, առաւել եւս ուղղագրական գրագիտութեան մասին խօսք չի կարող լինել:

Այդքան մռա՞յլ է, սակայն, մեր իրականութիւնը, հնարաւոր չէ՞ նոր սերնդին հեղգութեան թմբիրից սթափեցնել, ինքնութեան ակունքներին, ազգային նպատակներին հաղորդակցել: Այո՛, հնարաւոր է՝ նախ եւ առաջ մեր ոչ վաղ անցեալի յաղթանակով, այդ յաղթանակը՝ երբեմն յանիրաւի մոռացութեան մատնուած, անտեսուած կերտողներով: Համեմատաբար վերջերս, երբ լոյս տեսաւ իմ «Յաղթագէնները» գիրքը (խորագիրը ենթադրել է տալիս, թէ ինչի մասին է), բացի Գրողների Միու-

Շար.ը էջ 19

ՀԲԸՄ
ԱՐՏԱՒԱԶԴ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կը հրաւիրէ Ձեզ

ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻ
30 ԱՄԵԱՅ
ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍԻՆ

Գիրքը պիտի ներկայացնէ
Տոքթ. ԳԷՈՐԳ ՔԷՇԻՇԵԱՆ

Տեղի պիտի ունենայ
ԿԻՐԱԿԻ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2011
Երեկոյեան ժամը 6:00-ին

ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ
2495 E. Mountain Street, Pasadena, California 91104

Կը խնդրուի Արտաւազդ Թատերախումբի
նախկին ու նոր բոլոր մասնակիցներէն,
որ ներկայ գտնուին այս շնորհահանդէսին,
պատմելու համար իրենց
յուշամատեանները

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ԱՐԱՐԱՅԻ ԳՐՈՀԸ

**ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ**

«Մասիս» Շաբաթաթերթի 2011 թուականի Ապրիլի 23ի թիւ 14-ում, Դոկտ. Տ. Զաւէն Աւ. Քահանայ Արզումանեանի հեղինակութեամբ «Ապրիլեան Տարեդարձ 23 Լէգէոնականներու Յիշատակին:

Հայկական Լեգէոնը եւ Արարայի ճակատամարտը 1916» գրութեան առթիւ Մասիս Շաբաթաթերթի 26 եւ 27 թիւերում իմ հրապարակած «Հայկական Լեգէոնը եւ «Տանա Ատասը» Թրքական կղզու գրաւումը, Փիքօ Սայս Նուպար համաձայնութիւնը» գրութիւններից յետոյ, այդ առիթով սոյնը վերջին հրապարակում է:

Թրքական վարչապետարանի ընդհանուր տնօրէնութիւնը երկու հազար չորս թուականին «Հայ ֆրանսական Յարաբերութիւնները Օսմանեան Պատմութեան Ընդմէջէն» գրքին Գ. հատորն էր հրատարակել: Այդ գրքում հրապարակուել են օսմաներէն ու ֆրանսերէն փաստաթղթեր՝ 1920-1922 տարիներին ֆրանսացիների հետ հայերի գործակցութեան մասին: Այնտեղ յիշատակւում են ֆրանսական զօրքերի կողմից գրաւուած շրջաններում ապրող քաղաքայինների դէմ իբր հայ զինուորների կողմից գործադրուած բռնարարքներ: Գրքին մէջ զետեղուած են նաեւ փաստաթղթեր, որտեղ վկայուած է, թէ հայ զինուորներ յարձակած են Այնթապի, Ուրֆայի, Հաճընի եւ այլ բնակավայրերի մէջ բնակուող իսլամ բնակչութեան վրայ:

Կեղծել են, կեղծում են պատմութիւն՝ իրենց իսկ ազգաբանական պատմութիւնը, վառել են իրենց արխիւներ, հնարել նորերը: Ֆրանսական զօրքի մէջ ի՞նչ հայ զինուորներ: Սուրիա, Կիլիկիա արշաւող ֆրանս-անգլիական բանակի մէջ ոչ թէ հայ զինուորներ, այլ հայկական լեգէոն, հայերի զօրաբանակ՝ իր առանձին հրամանատարական կազմով: Ոչ, նրանք զինուորներ չէին, վրէժի ցասումով յորդած լեգէոնական մարտիկներ էին, որոնք ցեղին սրտի մորմոքը իրենց հոգիներում, զէնք էին վերցրել թշնամուն զարկելու: Նրանց գերդաստանների շառաւիղները մահուան կարաւաններ էին դարձել, թշնամու եաթաղանները պատռել էին նրանց լանջերը, հրէշտակային խինդն էր մարել նրանց մանչերի նայուածքներում, մարել էին նրանց արեգակունք աչքերի լոյսի բոցերը, մարել էին նրանց աղօթքի ու հորովելների երգերը: Այդ մարտիկների ստուար մի մասը դեռ նոր էին իրենց լեռներում յաղթական ճակատամարտեր մղել նրանց դէմ: Կռուի ու վրէժի արեւավառ տենչով, իրենց Վահագնի պատերազմի հայը ցանկացաւ տեսնել իր հոգում հրավառուած Կիլիկիան, Հռոմկլայի կաթողիկոսանիստ տաճարում աղօթելու, ունկնդրելու Շնորհալիի արեգակի արդար լուսոյ շարականները:

Յիսուն երեք օրերի հերոսամարտից յետոյ Փորտ Սայիտի աւազուտներ, իրենց լերան կանաչ հիւղակների փոխարէն՝ վրանների տակ: Վրանաքաղաք անուանեցին այն, վրան-դպրոցներ ու վրան-եկեղեցիներ կանգնեցրին: Արեւի կրականանէտ վարսերը այրում էին, զարմանում էին, իրենց լանջերի արեւը իր վարսերով տաքուկ շոյում էր դէպի իրեն երկարած այգիների թեւերը, ծիածանացած փառքի գօտի կապում իրենց լերան մէջքին, արդեօք այդ արեւն այն արե՞ւն էր: Խաղաղ էր այդտեղ, ոչ այգիներ ու պարտէզներ, ոչ ցորեանի դաշտեր, ոչ արօր ու մաճկալ, ոչ ալէծածուփ լեռների կանաչ լանջեր, ոչ մանուշակի կապոյտով ալիքուած բացատներ, ոչ շանթերի կրակալոյսը գրկած անձրեւ, ոչ պայթող աղբիւրների ջրերի հռնդիւն: Աշխարհի կռիւն էր դեռ մոլեգնում, իրենց սրտերում դեռ չէին մարել հայրենի լեռներում հրացանների պայթիւնների որոտների արձագանգները, դեռ իրենց չաւարտուած կռիւն էին տենչում, իրենց հոգիներում վրիժառութեան բոցեղէն խարոյկն էր պոռթկում:

Վրանաքաղաքի լեռնականների հոգիներում պատերազմի չեփորների հրավառութիւն էր, փոթորկում էր այդ զէնքերի պայթիւնների շառաչներով, արեւը գրկած սիւներից ժայթքած կրակը վրէժի ջահեր պիտի վառէր այնտեղ: Պիտի կռիւ լինէր, պատերազմի էին գնում՝ կարաւանների մանկանց ճիչերի, մայրերի կարկառած թեւերի աղերսների, գաղթի ճամբաների երթում մարած սրտերի, իրենց հաւատքի ու ցեղի խոհական հանճարի իմաստութեան համար մարտիրոսացած հոգիների ստուերներն էին վրէժի կանչում նրանց: Զինուորագրուել էին աւելի քան վեց հարիւր Մուսա Լեռցի լեռնականներ, որոնց լերան կռուի քաջութեան դափնեպսակին փառքի արեւալոյս նոր ծիածաններ պիտի շողային, որոնցից մէկն էլ Կապորալ դարձած հայրս՝ Արմենակ Լագիսեանն էր: Հապա այս տողերը շարադրելիս ինչքան են նրանց քաջութեան սիրով արբեցել, երեւակայութեանս լուսաճաճանչ շողերի բազմած ես էլ նրանց հետ, ճակատաբաց զէնք գրկած գրոհի գնացել, ինչ լաւ է երազել, ափսոս որ դեռեւս աստղերից իջած չեմ եղել, որ ես էլ սրտիս հուրի նետերը զարկէի թշնամու լանջին:

Զինուորագրուած հայ արիներին փոխադրեցին Կիպրոս կղզու Մոնարկա վայրը: Կամաւոր Արմենակ հայրս պատմում էր, որ իրենց զինուորական մարզումների էին տարել Լեւոնի բերդ: Այն ծագումով ֆրանսացի, Լուսինեան իշխանական տոհմից Կիլիկիայի թագաւոր Լեւոնի բերդն էր: Մարզումների ժամանակ ֆրանսական սպան դիմելով կամաւորներին, յայտարարել էր՝

- Այս ամրոցում, Կիլիկիայի ձեր Լեւոն թագաւորի սխրանքների արձագանգներն էին թեւածում, թող նրա արեւային ոգու հուրը շողայ ձեր սրտերում, պատրաստ եղէք զէնքով մուտք գործելու թագաւորանիստ Սիս քաղաքի նրա ամրոցը:

Ամրացել էին Լէգէոնականները, արդէն տիրապետում էին նոր զէնքերին, թշնամուն կռիւ տալու նրանց ոգին ահագնացել էր իրենց լեռների նման: Եւ տեղափոխեցին նրանց Պաղեստին, Երուսաղէմից ոչ հեռու, Արարայի (այժմ Նապլուս) ամրացուած բարձունքների դիմաց ու խրամատաւորուեցին: Արարան, գերմանա-թրքական խիստ ամրացուած ճակատային զինուորական պաշտպանական գիծ էր: Ֆրանս-անգլիական զօրամասերի մի քանի գրոհները անզօր էին եղել այն իրենց զինուորներով նուաճելու: Էնվեր ու գերման հրամանատար Ֆոն Սանտերս յոխորտացել էին, որ այն անառիկ է ու անընկճելի: Ահա այս ամրոցը այրելու, խորտակելու առաջադրանք վստահել էին հայ լէգէոնականներին:

1918 թուականի Սեպտեմբերի 19ի առաւօտը, երբ արեգակը իր արդար լոյսի շողերի վարսեր էր ցօղում խրամատները, որոտացին թնդանօթները ու ֆրանսացի ապա Ռոմիէօյի ատրճանակի կրակոցով ու «Առաջ» կանչով, խրամատներից դուրս նետուեցին հայ զինուորները՝ կորիւնների մռնչիւններով: Գրոհ, թէ՞ արեւի շողերին բազմած սլացան դէպի հանդիպակած բարձունքները: Կրակի բոցերն էին ժայթքում հրացաններից, արեւին թիկնած սուինները իրենց կրակալոյս նետերն էին տեղում թշնամու դիրքերի վրայ: Գրոհում էին առիւծասիրտ կամաւորները, կարծես Նեմեսիսն էր նաեւ իջել ռազմի դաշտ՝ վրիժառու կրակ ոգին յորդելու հայերի սրտերին: Սլանում էին դէպի բարձունքների դիրքերը, թշնամին անզօր էր եղել մարելու դէպի վեր մագլցող հայերի ոգու արեւները: Ո՞վ եւ ինչը կարող էր կասեցնել այդ առիւծացած մարտիկների թռիչքների սլացքները, ի զուր էր թշնամու կրակէ գնդակների տեղատարափը, կամաւորները այն ճանկում էին օդի մէջ եւ ետ շպրտում դէպի նրանց դիրքերը...: Գերման հրամանատարը զգուշացնում է, որ այդպէս գրոհողները միայն հայերը կարող էին լինել: Արարայի երկնքում կռունկների երամներ էին թռչում՝ հայոց կարաւանների փշրանքներին խապրիկ մը տանելու, որ հեռու լեռներում՝ իրենց տառապանքի մորմոքի, մանուկների աղաղակների, մարտիրոսացած սրտերի վրէժի կռիւ էր մոլեգնում: Կամաւորների «հուռա»ներ ու «յաղթանակ» կանչերը չէի՞ն հասնում արդեօք իրենց ցեղի իմաստութեան ու աստուածային լոյս հաւատքի համար մարտիրոսացած արմէնների հոգիներին՝ որպէս աղօթք ու սփոփանք:

Արեւը դեռ իր կարմիր պատմուճանը չփռած հայերի կրակով շառագունած Արարայի բարձունքների վրայ, կամաւորները արդէն թշնամու առաջին խրամատների վրայ էին: Արեւի կրակ ճառագայթներն էին քաղում ափերով եւ խուրձ, խուրձ նետում խրամների մէջ կծկուած թշնամու վրայ: Իսկ ես եւ դու արի ընթերցող, եթէ այդ կռուի զինուորները լինէինք, յաղթանակի լոյսով արբեցած հրավառ մեր սիրտերը որպէս արեւներ չէի՞նք նետի թշնամու խրամատներ՝

Շար.ը էջ 19




ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ
ST. GREGORY ARMENIAN CHURCH
Geragos BANQUET HALL OF PASADENA
NEWLY REMODELED



Now ready to host your
• Wedding
• Baptism
• Anniversaries
• All other happy & sad events.
• Հարսանիք
• Մկրտութիւն
• Տարեդարձ
• Եւ ամէն ուրախ ու տխուր առիթներ:
ՎԱՀԷ 562-715-8730 VAHE
Եւ մատչելի գիներով ձեզ կ'սպասարկենք

# ԱՄԷՆ ԻՆՉ՝ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ

*ԷԼԵՆԱ ԶՕՓԱՆԵԱՆ*

*Ձեռագիրը վերծանում է զգացմունքները, բնաւորութեան գծերը, կարողութիւնները եւ այլն*

Գրաֆոլոգիան՝ ձեռագրաբանութիւնը, բժշկական եւ հոգեբանական բնոյթ ունի: Այն էմպիրիկ գիտութիւն է, որը ուսումնասիրում է էմոցիոնալ եւ ֆիզիքական գործօնների համադրութիւնը՝ մարդու էութիւնն աւելի լաւ հասկանալու նպատակով: Ձեռագիրը անգիտակցական սովորութիւն է (ռեֆլեքսոր աղեղ)՝ «աւտոմատացուած ծրագիր», որը կազմաւորւում է 6-8 տարեկանում: Անգիտակցական գործողութիւն, որի ժամանակ միտքն անմիջապէս նուրբ էլեկտրական իմպուլսներ է ուղարկում դէպի ձեռքերը եւ մատները՝ հաղորդելով այն, ինչ մտածում ենք: Իսկ հասուն տարիքում չենք մտածում, թէ ինչպէս ենք գրում, այլ միայն ինքնաբերաբար եւ անգիտակցաբար գրում ենք: Ձեռագրաբանութեան օգնութեամբ կարելի է վերծանել բնաւորութեան գծերը, զգացմունքները, բանական կարողութիւնները, մտաւոր գործընթացները, ֆիզիքական եւ հոգեւոր էներգիան եւ այլն: Լաւ ձեռագրաբանը միայն առաջին հայեացքից կարող է բացայայտել մօտաւորապէս 100 անհատականութեան գծեր: Ըստ «The Wall Street Journal»-ի տարածած յայտարարութեան՝ Ֆրանսայում, Սպանիայում, Հոլանտայում եւ Իսրայէլում 500 լաւագոյն ընկերութիւնների մօտաւորապէս 80%-ը մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում օգտագործում էր ձեռագրաբանութեան վերլուծութիւնը՝ որպէս մարդու ներաշխարհի բացայայտման մեթոդ: Գրաֆոլոգիան՝ որպէս ճշգրիտ գիտութիւն ի յայտ է եկել Հռոմէական կայսրութեան ժամանակաշրջանում: Այս գիտութեան տեխնիկան այդքան բարդ չէ: Դրա միջոցով ձեռագիրը կարելի է վերլուծութեան ենթարկել 15 րոպէում, իսկ փորձառու մասնագէտ-ձեռագրաբանը կէս ժամուայ ընթացքում կարող է վերծանել 100-ից աւելի բնաւորութեան գծեր: Իսկ ձեռագրի վերլուծութեան համար նախ եւ առաջ պէտք է թեթեւ գրել՝ առանց որեւէ ջանք գործադրելու: Ձեռագրաբանութեան ամենակարեւոր չափանիշներն են՝ գրուածքի տառատեսակի չափը, հիմնական գծի ոճը, գծերի եւ բառերի միջեւ եղած տարածութիւնը, տառերի ձեւը, գրուածքի մեծութիւնն ու անկիւնը: Այսպէս, օրինակ, շատ մանր գրելաոճը բացայայտում է արտիստիկ՝ գեղարուեստական անհատականութեան: Անհատ, որը խորասուզւում է մանրուքների մէջ ամէն տեսակի հարցում: Ընդհանրապէս այսպիսի ձեռագիր ունեցողները մասնագիտանում են մէկ բնագաւառում, ունեն կեանքի մէկ նպատակ եւ իրենց ժամանակը կամ էներգիան չեն ծախսում այլ գործողութիւններում: Մանր ձեռագիր ունեցողները բանական եւ կիրթ անհատականութիւններ են: Նրանք մեթոդիկ են, բծախնդիր, ունեն նկատելու սուր զգացում եւ կարողանում են գլուխ հանել կեանքի տարբեր պահերին: Միջին չափսի ձեռագիր ունեցողները հաւասարակշռուած են, մեթոդիկ եւ ունեն առողջ բանականութիւն: Ստեղծուած են աւելի շատ բիզնեսի, քան ծառայութիւններ մատուցելու համար: Խոշոր ձեռագիր ունեցողները ակտիւ մտքի տէր մարդիկ են: Այսօրինակ մարդիկ սիրալիր են, վստահելի եւ կարող են ազդել շրջապատի վրայ: Դառնում են շատախօս այն ժամանակ, երբ կենտրոնանում են սեփական գործողութիւնների վրայ: Շատ խոշոր ձեռագիր ունեցողները համարւում են կարեւոր մարդիկ կեանքի տարբեր ոլորտներում եւ խուսափում են քննադատուելուց: Հաստատուն գրելաոճը (նոյն չափսի տառերը) մեթոդիկ մտքի ցուցանիշ է: Նուազող տառատեսակը հնարամտութեան, ճարպկութեան եւ նոյնիսկ խորամանկութեան ցուցանիշներ են: Այսպիսի մարդիկ ընկերասէր են, նրբանկատ եւ ազնիւ: Իսկ աճող տառատեսակը բացայայտում է ազնիւ, սահմանափակ վարուելակերպ ունեցող անհատին, որը սիրում է արտայայտուել եւ աշխատել ազնիւ ճանապարհով: Դէպի աջ թեքուած տառերը բացայայտում են շփուող, ընկալունակ, սիրալիր, սակայն ազդեցութեան տակ ընկնող մարդկանց: Ուղղահայեաց գրելաոճը ցոյց է տալիս անկախ եւ ազատ լինելու ցանկութիւնը: Ձախ թեքուածութիւն ունեցող տառերը մատնանշում են զսպուած եւ զգացմունքային անձնաւորութեանը, որը ինքն իր հանդէպ մշտապէս ազնիւ լինելու կարիք ունի: Իսկ շահագործելու պարագայում՝ դառնում են դժգոհ եւ դժբախտ:

Տառերի բարձրութիւնը պէտք է բաժանել երեք՝ վերին, միջին եւ ստորին տարածքի, իսկ իւրաքանչիւր տառի կատարեալ չափսը պէտք է լինի մօտ 3 մմ: Ուստի սովորական տառի չափսը պէտք է լինի 9 մմ, որը ցոյց է տալիս, որ անհատը էքստրաւերտ է, պարծենկոտ, թէեւ այլոց ներկայութեամբ բաւականին զսպուած: 9 մմ-ից փոքր տառերի չափսը բացայայտում է բանական անհատին: Այսպիսի տառատեսակը բնորոշ է մտածողներին, ակադեմիկոսներին: Եթէ տառերը փոքր են եւ նուրբ գրուած, ուրեմն մարդը անծանօթների հետ շփման մէջ դժուարութիւնների է հանդիպում՝ չկարողանալով հեշտութեամբ փոխել սեփական սոցիալական դիրքը, անգամ, եթէ առկայ է այն իրականացնելու մեծ ցանկութիւն: Ընդհատուած՝ անջատ-անջատ գրելաոճը բացայայտում է երազներում ապրող եւ չափազանց ակտիւ մարդկանց: Այդպիսի մարդիկ սիրում են արուեստն ու բնութիւնը: Փոքր եւ սեղմուած ձեռագիրը մերկացնում է չափազանց արտայայտուող, փողային հարցերում զգոյշ, կասկածամիտ եւ բիզնեսում յաջողակ անձանց: Եթէ տառերի հեռաւորութիւնը մեծ է՝ գործ ունենք ազատ եւ անկախ լինելու ցանկութեամբ մարդկանց հետ: Եթէ տառերը չափազանց հեռու են միմիանցից, տուեալ մարդիկ արտայայտուող, ցուցադրող, ակտիւ, ինքնահաւան, մեծամիտ, կեանքի հաճոյքները սիրող, անկայուն եւ շռայլող մարդիկ են: Ուստի պէտք է ուշադիր լինեն փողային գործերում: Եթէ տառերի միջեւ հեռաւորութիւնը փոքր է, ուրեմն խօսքը շփուող, բռնկուող եւ ակտիւ անձանց մասին է: Իսկ եթէ այն շատ փոքր է՝ անձը բարդ է եւ սիրում է այլոց կեանքով ապրել: Եթէ միեւնոյն անձը միաժամանակ գրում է եւ մօտիկ, եւ հեռու, ուրեմն գործ ունենք զգացմունքային եւ անկայուն անհատի հետ: Ընդհանրապէս, դէպի ներքեւ իջնող՝ նուազող տողերը խօսում են դեպրեսիայի եւ վատատեսութեան մասին: Եթէ տառերին յաջորդում է ուռուցիկ գիծ, ուրեմն տուեալ անձը իւրաքանչիւր գործ սկսում է մեծ ոգեւորութեամբ, սակայն յետագայում, կորցնելով հետաքրքրութիւնը՝ հրաժարւում է տուեալ գործից: Իսկ առանց

Շար.ը էջ 19



## ՍԹՐԵՍԸ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

*Սթրեսի բացակայութիւնը մահ է*

*Սթրես (անգլ. Stress - լարուածութիւն, ճնշում). օրգանիզմի ընդհանուր եւ առանձնայատուկ յարմարուողական ռեակցիան է զանազան ազդեցութիւնների (սթրեսորների) նկատմամբ, ինչպէս նաեւ օրգանիզմի ներքին համակարգի համապատասխան վիճակը:*

*Սթրեսի տեսութիւնը մշակել է կանադացի բժիշկ-ախտաբան Հանս Սելյեն (1936թ.): Զեւակերպելով սթրեսի տեսութիւնը՝ նա տուել է յարմարուողական համախտանիշ (ադապտացիոն սինդրոմ) հասկացութիւնը, ըստ որի՝ հիւանդածին գործօնն օժտուած է իւրայատուկ «գործարկիչ» ազդեցութեամբ: Ներքին գերլարուածութեան վիճակ, որի նշաններն են՝ արեան եւ աչքի ներքին ճնշման բարձրացումը, մկանային լարուածութիւնը, արտազատման գործընթացների ակտիւացումը, սրտի աշխատանքի եւ շնչառութեան փոփոխութիւնները, խռովայոյզ, տագնապալից հոգեվիճակները, գրգռուածութիւնը, ճնշուածութիւնը, գործունէութեան ցուցանիշների փոփոխութիւնը:*

*Սթրեսային ռեակցիայի տեսակէտից նշանակութիւն չունի՝ հաճելի է, թէ տհաճ այն իրադրութիւնը, որին բախւում է օրգանիզմը: Մի դէպքում առաջանում է հաճելի սթրես (էվսթրես), միւս դէպքում՝ վնասաբեր սթրես (դիսթրես): Սթրեսային ռեակցիաները բնորոշ են նաեւ ներքին համակարգ չունեցող ստորակարգ կենդանիներին, նոյնիսկ՝ բոյսերին: Ֆիզիոլոգիական սթրեսային վիճակները մարդու գործողութիւնների շարժառիթներն են, որոնցից խուսափելն անհնարին է:*

*Տուեալները ցոյց են տալիս, որ սթրեսային իրավիճակների առաջացման հաւանականութիւնը տարբեր մասնագիտութիւնների տէր մարդկանց համար լինում է տարբեր: Ներկայացւում է առաւել անհանգիստ աշխատանքներ համարուող սթրեսածին մասնագիտութիւնների ցանկը նուազման կարգով՝ ըստ 10 բալանոց սանդղակի:*

*Ում աշխատանքն է*
*աւելի անհանգիստ*
*Հանքափոր 8.3*
*Ոստիկան 7.7*
*Լրագրող, օդաչու 7.5*
*Գործարար, ընկերութեան ղեկավար 7.4*
*Ատամնաբոյժ 7.3*
*Դերասան 7.2*
*Տաքսու վարորդ 6.8*
*Մանկաբարձ, կլինուէժիստ 6.5*
*Լոգոպեդ 6.4*
*Երաժիշտ, հրշէջ 6.3*
*Ուսուցիչ 6.2*
*Աւտոբուսի վարորդ 5.9*
*Վաճառող 5.7*
*Ֆերմեր, գիւղացի 4.8*
*Դիւանագէտ 4.7*
*Զինուորական 4.6*
*Նկարիչ 4.2*
*Ճարտարապետ 4.0*
*Ծրագրավորող 3.7*
*Բանկի ծառայող 3.5*
*Թանգարանի աշխատող 2.8*
*Գրադարանավար 2.0*

*Մարդկանց զգալի մասն իր առջեւ չափից մեծ խնդիրներ է դնում եւ ձգտում արագօրէն յաղթահարել դրանք: Մարդն անդադար շտապում է միաժամանակ բազում, բազմաբնոյթ գործեր կատարել՝ իր իսկ կողմից սահմանուած ժամանակահատուածում:*

*Բժիշկներն այդ երեւոյթը որակում են որպէս աճապարանքի հիւանդութիւն: Յուզական սթրեսը այդպիսի կենսակերպի ուղեկիցն է: Այնուամենայնիւ սթրեսը կեանքի համն ու հոտն է: Այն նաեւ դրական, կառուցողական նշանակութիւն կարող է ունենալ: Բազում, դաժան փորձութիւններ յաղթահարած մարդու դիմադրողականութիւնն աճում է, նա աւելի ու աւելի կազմակերպուած, ամուր է դառնում:*

*Մեր խնդիրը պէտք է լինի կանխել սթրեսի վերածումը հոգեկան հիւանդութեան, ձեռք բերել սթրեսները յաղթահարելու ունակութիւն: Բոլոր դէպքերում սթրեսի հարուածներից էներգիայի զգալի կորուստ է ենթադրւում: Սթրեսին առաւել ենթակայ է ազնիւ, պատասխանատու եւ օրինապաշտ մարդը: Զարմանալիօրէն սթրեսների քանակը աւելի շատ է առաւել զարգացած երկրներում: Սթրեսածին գործօններ կարող են լինել երկրաշարժը, պատերազմը, բռնազաղթը, սոցիալական ցնցումները, էներգետիկ եւ իհարկէ՝ ֆինանսական ճգնաժամերը: Յատկանշական է, որ այսօր սթրեսներով առաւել «հարուստ» երկիրը համարւում է ԱՄՆ-ը:*

*- Իւրաքանչիւր փոփոխութիւն սթրես է,- գտնում են հոգեբան-գիտնականները:*

*Ուրեմն՝ յանուն եւ ընդդէմ սթրեսի:*

## ՄԵՐ ԱՐՏԱՔԻՆԸ ԲԱՐԵԼԱՒՈՂ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

*Կան որոշ ուտելիքներ, որոնք կը բարելաւեն մեր արտաքին տեսքը: Այդ ուտելիքներէն են հետեւեալները.*

** Հաւկիթը.*

*Ուժականութեան յարատեւ աղբիւր հանդիսացող այս ուտելիքը շատ անգամներ կը կազմէ մեր նախաճաշը կամ ընթրիքը:*

*Հաւկիթը յագեցողութեան զգացում յառաջացնող լաւագոյն ընտրութիւններէն մէկն է: Հաւկիթը հարուստ է երկաթով, որ կրնայ արգիլել հերաթափութիւնը: Ան նաեւ կը պարունակէ ծծումբ (sulfur), որ կ’օգնէ մազերդ հարթ եւ փափուկ պահելու:*

** Պանանը.*

*Պանանը այն ուտելիքներէն է, որ մորթիդ քնքշութիւնն ու առաձգականութիւնը կը պահէ: Փորձէ հետեւեալը. տարբեր տարիքի քանի մը անձերու դաստակին ետեւի մորթը կսմթէ, մորթը դէպի վեր քաշէ եւ ապա ձգէ, որքան շուտ ան իր դիրքին վերադառնայ, այդքան առաձգական է այն: Ծխախոտի գործածութեան նման այլ բաներ եւս մեծ վնաս կը հասցնեն առաձգականութեան գծով, եւ պանանին մէջ գտնուող փոթասիումը կրնայ օգտակար դառնալ այս հարցով, որովհետեւ պանանը այն ուտելիքներէն է, որ կը բարելաւէ մեր արտաքին տեսքը:*

** Հնդկախնձոր (Կուավա).*

*Հնդկախնձորը հարուստ է անթի-օքսիտանթներով, որոնք կը պայքարին այն ազատ մասնիկներուն դէմ, որոնք մորթին վնաս կը հասցնեն եւ անհատին կու տան կանխահաս ծերութեան կերպարանք: Եթէ հնդկախնձորի բարեկամ չէք, ստիպուած չէք զայն ուտելու: Բաւարար է, որ անոր միջուկէն բաժին մը առնէք եւ քսէք ձեր մորթին, բայց յետոյ, տունէն դուրս չեկած, լուացէք զայն ձեր մորթին վրայէն:*

*Հնդկախնձորը նաեւ հարուստ է C կենսանիւթով, զոր կը պարունակէ նարինջէն հինգ անգամ աւելի համեմատութեամբ: Ան նաեւ ունի առողջապահական այլ օգուտներ:*

** Հնդկահաւի միս.*

*Իգական սեռի պատկանող անձեր շատ ուշադրութիւն կը դարձնեն իրենց եղունգներուն, ակռաներուն, մազերուն, եւայլն:*

*Հետեւաբար, կարելի չէ արհամարհել եղունգներու առողջութիւնը: Այս պատճառով հարկ է կատարել հետեւեալները. ա) պէտք է զգոյշ ըլլաս օրական բաւարար քանակութեամբ ջուր խմելու, բ) եւ բաւարար չափով փրոթէյին ստանալու: Այս չի նշանակեր, թէ ամբողջ շաբաթը միայն միս պէտք է ուտես, որովհետեւ պտուղով եւ բանջարեղէնով հարուստ սննդականոն մը կ’օգնէ լաւ տեսք պահելու:*

*Այս գծով լաւագոյն օրինակներէն կրնայ հանդիսանալ հնդկահաւի միսով ապուրը, որ թէ’ հեղուկ եւ թէ փրոթէյին կը պարունակէ:*

## ԴԴՈՒՄԻ ՍԵՐՄԵՐԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

*Դդումի սերմերի ճիճուասպան յատկութիւնը վաղուց է յայտնի: Սակայն ոչ միայն դա: 40-50 տարեկանից յետոյ տղամարդկանց մօտ յաճախ է հանդիպում շագանակագեղձերի բորբոքում (պրոստատիտ), ինչպէս նաեւ ադենոմա (ուռուցքի տեսակ): Արտասահմանում այն բուժում են արմաւէնու ծառի մզուածքով: Մզուածքը ունի ուժեղ հակաբորբոքային յատկութիւն, փոքրացնում է նաեւ շագանակագեղձի ադենոմայի չափերը: Այսպիսի յատկութիւն ունեն նաեւ դդմի սերմերը, աւելի ճիշտ՝ նրանց բաղադրութեան մէջ մտնող դդումի իւղը: Այն դդումի սերմերում մօտ 50% է: Պարունակում է շատ կարեւոր միկրոտարրեր եւ յատկապէս՝ ցինկ: Հէնց ցինկի պակասն էլ օրգանիզմում առաջ է բերում շագանակագեղձի ախտահարում: Դդմի սերմերը պարունակում են նաեւ վիտամիններ A, B, D, E, K եւ C: Ամէն օր կերէք, աւելի ճիշտ՝ «չրթէք» 20-25 դդմի սերմ, որը հիանալի կանխարգելիչ ազդեցութիւն ունի:*

*Դդմի սերմերը օգտակար են նաեւ պատանեակներին եւ աղջիկներին, որոնց մօտ յաճախ են պատահում ճարպային պզուկներ, սեբորեա եւ ճարպային թեփեր:*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ**

**(626) 797-7680**

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒԶԷԼԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 7-էն*

*Լոնտոն, Փարիզ... որտեղ ասես՝ չկան: Փոխանակ մեր ուժերը համատեղենք՝ գնացել, օտար երկրին ուժ ենք տալիս: Հիմա ասում են՝ վերադարձէք հայրենիք: Լաւ, վերադարձանք հայրենիք: Ի՞նչ էք առաջարկում անել... Ահա այս հարցերն են, որոնց շուրջ մեր ժողովուրդը, իր բոլոր խաւերով համատեղ, պէտք է ծրագրի իր անելիքները: Մի կազմակերպութիւն այս է անում, միւսը այն է անում, երրորդը՝ մէկ ուրիշ բան... Մենք պէտք է վիճելի հարցերը զանազանենք անվիճելի հարցերից եւ անվիճելի հարցերի շուրջ համախմբուենք: Երբ որ նստենք զանազանելու, կը տեսնենք, որ վիճելի ոչ մի հարց չկայ: Դա մարդկանց մտքի մէջ է:*

-Այնուամենայնիւ չասացիք՝ անկախութիւնը ի՞նչ տուեց հայրենիքին:

*-Անկախութիւնը մենք չենք շահել, այն տրուել է մեզ: Ինչպէս եւ նախորդ անկախութիւնը: Այն ժամանակ, մենք ստիպուած ենք եղել մեզ անկախ հռչակել. ցարական Ռուսաստանը փուլ էր եկել, կովկասեան իւրաքանչիւր հանրապետութիւն իրեն անկախ հռչակեց, ուրիշ ելք չունէր: Նմանապէս, Խորհրդային Միութիւնը կործանուել էր, ամէն երկիր ստիպուած իրեն անկախ հռչակեց: Եթէ կան մարդիկ, ովքեր կարծում են, որ սովետական կառավարութեան դէմ որոշ չափով պայքարեցին, եւ այդ տարիներին իրենք են այդ անկախութիւնը ձեռք բերել՝ դա շատ սխալ մտածելակերպ է: Սովետական Միութիւնն իր մէջ կործանուել էր, դրանից էլ ծնուել է Հայաստանի Հանրապետութիւնը: Ծնուած անկախ Հայաստանը սուրբ է մեզ համար: Մենք դարերով երազել ենք այդ մասին: Այս հողը մեր պապերի եւ զաւակների արիւնով շաղախուած հող է:*

*1968 թուականին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Առաջինին, ով Միջազգային խաղաղութեան խորհրդի մրցանակը նոր էր ստացել, մօտեցաւ մի զինուորական, ում ես չէի ճանաչում, մօտեցաւ եւ մաքուր հայերէնով ասաց. «Վեհափա՛ռ Տէր, շնորհաւորում եմ Խաղաղութեան համաշխարհային խորհրդի կողմից ստացած Ձեր ոսկէ մետալը»: Վեհափառն էլ ասաց. «Ես էլ շնորհաւորում եմ Ձեր եւ մեր Երեւանի 2750 ամեակը»: Զինուորականը դարձաւ Վեհափառին եւ ասաց հետեւեալը. «Վեհափա՛ռ Տէր, Աստուած մի՛ արասցէ, եթէ թշնամին նորից յարձակուի մեր երկրի վրայ, առաջին հերթին ես իմ տանկերը կը շարեմ Էջմիածնի պատերի շուրջ, որ ոչ մի գնդակ չդիպչի այդ սրբազան քարերին»: Ինչպէս յետոյ իմացայ, այդ զինուորականը Մարշալ Բաբաջանեանն էր: Երբ Մարշալը հեռացաւ մեզանից, Վազգէն կաթողիկոսը դարձաւ ինձ. «Աստո՛ւր, արտասահմանում սխալ կարծիք կայ, որ մեր ղեկավարները հայրենասէր չեն, սրանից աւելի հայրենասիրական պոռթկում դու տեսե՞լ էիր երբեւէ»:*

*Ուրեմն այդ ոգին կայ բոլորի մէջ, եւ այլեւս ժամանակն է, որ մեր սխալները սրբագրենք: Ժողովուրդը նայում է իր ղեկավարներին, նրանք պէտք է լինեն այնպիսին, որ ժողովուրդը յարգի նրանց եւ յարգելով օրէնքը պահի, օրէնքը պահելով՝ երկիրը զարգացնի: Օրէնքի առջեւ բոլորը հաւասար են: Մի անգամ Անգլիայի նախկին վարչապետ Ուիլսոն Չերչիլի վարորդը սխալ տեղ էր կայանել վարչապետի աւտոմեքենան: Տուգանեցին, գործը գնաց դատարան, Ուիլսոնը տանուլ տուեց դատը: Վարչապետ ես թէ ոչ, օրէնքի առջեւ ամէնից առաջ դու քաղաքացի ես:*

*...Մենք ո՛չ Ամերիկա ենք, ո՛չ Անգլիա ենք, ո՛չ Գերմանիա, ո՛չ էլ Ֆրանսա... Փոքրիկ երկիր ենք, ո՛չ նաւթ ունենք, ո՛չ բնական հարստութիւն, ո՛չ ծով, միայն խելօք մարդիկ ունենք, որոնց մեծ մասը գնացել է: Սովետական շրջանի առաջին համակարգիչները Հայաստանում ստեղծուեցին, Մերգելեանի հսկողութեամբ: Ուրեմն մեր այդ հարստութիւնը պէտք է կարողանանք օգտագործել: Բոլորս միասին՝ Սփիւռք-Հայրենիք, ձեռք ձեռքի տուած, ծրագրուած աշխատանքով... Դաշնակ, Հնչակ, ռամկավար եւ այլ կուսակցութիւն պիտի մոռանանք: Կուսակցութիւնը լաւագոյն դէպքում կարող է իր երկրում աշխատել, դրսում կուսակցութիւնը իմաստ չունի այլեւս: Բոլորս պէտք է միանանք, ես 60 տարի այդ մասին եմ գրում:*

-Այս տեսակ ներուժի մարդը, ինչպիսին Դուք էք, երբէք չի՞ մտածել, որ այստեղ՝ հայրենիքում, իր առաքելութիւնն առաւել ընդարձակ եւ միգուցէ աւելի տեսանելի ու շօշափելի արդիւնքների կը հասնէր, եթէ մշտական բնակութիւն հաստատէր Հայաստանում:

*-Մարգարէն իր ապրած քաղաքում արժէք չունի: Մի օրինակ բերեմ: Լոնտոնում եմ ապրում, վերջին 15 տարիներին այնտեղ գործող հայկական կազմակերպութիւնները դրսից՝ Պէյրութից, Ամերիկայից դասախօսներ են բերում, Ապրիլ 24-ին ելոյթ ունենալու համար: Ես նստել եմ Լոնտոնում, ոք չի ասում. «Պրն. Կիւզելեան, Դուք հայ ժողովրդի պատմութեան, հայ գրականութեան դասախօս էք եղել երկար ժամանակ, երկու թերթերի խմբագիր, գրքեր էք գրել, հրամեցէ՛ք, ելո՛յթ ունեցէք»... Ինձ հրաւիրում են Աւստրալիայից՝ Ապրիլի 24-ին խօսելու համար, ինձ հրաւիրում են Ամերիկայից ՀԲԸՄ 100 ամեակի առիթով... Ի դէպ, Հոկտեմբերին նորից գնում եմ Ամերիկա՝ Գալիֆորնիա՝ ելոյթ ունենալու: Համոզուած եմ՝ նոյնը կը լինէր եթէ ես գայի հայրենիք: Դրսից ձայնն աւելի ուժեղ է գալիս, քան ներսից: Ժամանակին Վարդգէս Համազասպեանին մօտեցել եմ, թէ. «Ուզո՞ւմ էք՝ գամ, հաստատուեմ հայրենիքում», ասաց. «Այստեղ մենք շատ մտաւորականներ ունենք, մենք քո կարիքը Սփիւռքում ունենք, մնայ այնտեղ, որ աւելի մեծ գործ անես»: Պատահում է այնպէս, որ ձայնդ դրսից աւելի լաւ է գալիս, դուք հիմա կը գրէք. «Լոնտոնից եկած Աստուր Կիւզելեանը հարցազրոյց տուեց armedia.am կայքէջին», իսկ եթէ ես այստեղ ապրող հայ լինէի, կ՚ասէին. «Էլի սկսեց մեր գլուխը ցաւեցնել»:*


# ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Ave**
**Pasadena, CA 91107**
**Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով**
**Հետաքրքրուողներէն խնդրուածայնել՝**
**(626) 398-0506**



**REQUEST FOR PROPOSALS**
**(RFP #7555)**
**2011 CONTINUUM OF CARE HOMELESS ASSISTANCE PROGRAMS**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified organizations interested in providing supportive services with assisted housing through the Section 8 Continuum of Care Homeless Assistance Programs. Copy of the RFP may be obtained beginning August 1, 2011 via http://www.hacla.org/ps/ or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M. August 26, 2011.**

8/11, 8/18/11
CNS-2147365#
MASSIS WEEKLY



**INVITATION FOR BIDS**
**(IFB) 7790**
**RANGES**

**The Housing Authority of the City of Los Angeles invites your firm to submit a bid to sell ranges to the Authority.**

**Copies of the IFB may be downloaded at www.hacla.org/ncg. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100 Los Angeles, CA 90057 until 1:30 P.M., local time August 26, 2011.**

**INVITATION FOR BIDS**
**(IFB) 7792**
**REFRIGERATORS**

**The Housing Authority of the City of Los Angeles invites your firm to submit a bid to sell refrigerators to the Authority.**

**Copies of the IFB may be downloaded at www.hacla.org/ncg. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100 Los Angeles, CA 90057 until 2:30 P.M., local time August 26, 2011.**

8/11, 8/18/11
CNS-2147099#
MASSIS WEEKLY



**INVITATION FOR BIDS**
**(IFB) No. 1711**
**THE RE-ROOFING OF SIXTY (60) BUILDINGS AT RANCHO SAN PEDRO HOUSING DEVELOPMENT LOCATED AT 275 W. 1ST STREET, SAN PEDRO, CA 90731**

**The Housting Authority of the City of Los Angeles invites vendors to submit firm fixed price bids for the re-roofing of sixty (60) buildings for Rancho San Pedro housing development located at 275 W. 1st Street, San Pedro, CA 90731. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057 until 2:00 p.m. (local time), August 24, 2011.**

8/11, 8/18/11
CNS-2147045#
MASSIS WEEKLY


## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

**Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:**
**G.Y.O.**
**1060 N. ALLEN AVE.**
**PASADENA, CA 91104**

*ՊՐՆ. ԱՐԱ ՊՈՅԱՄԵԱՆ ԸՆԴ ՕՐ. ՎԵՐԺԻՆԻԱ ՄԵԼԳՈՆԵԱՆ*
*ամուսնացեալք*
*21 Օգոստոս, 2011 Լոս Անճելըս*

*Մեր ջերմ շնորհաւորութիւնները նորապսակներուն եւ խնդակցութիւնները իրենց ծնողներուն ու ընտանեկան պարագաներուն՝ մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Յարութիւն եւ Լուսին Պօյամեաններուն ու բոլոր մերձաւորներուն:*

*ՊՐՆ. ՏԻԳՐԱՆ ԽՈՒՏԱՆԵԱՆ ԸՆԴ ՕՐ. ՄԵԼԻՆԷ ԱՌԱՔԵԼԵԱՆ*
*ամուսնացեալք*
*30 Յուլիս, 2011 Երեւան*

*Մեր ջերմ շնորհաւորութիւնները նորապսակներուն եւ խնդակցութիւնները իրենց ծնողներուն ու ընտանեկան պարագաներուն՝ մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Սուրէն Խուտանեաններուն ու բոլոր մերձաւորներուն:*


**www.massisweekly.com**
**updated every Friday**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԵՂԻՍԱԲԵԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ*

*ԵՂԻՍԱԲԵԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆԻ, մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի, Կիրակի, 3 Սեպտեմբեր, 2011ին:*

*Սգակիրներ՝*

*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Ալիս Գարաօղլանեան:*

*Զաւակները՝*

*Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրօղլեան:*

*Տէր եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրօղլեան:*

*Թոռները՝*

*Տէր եւ Տիկ. Մայք եւ Մարալ Պօյաճեան (Լիբանան)*

*Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սիլվա Ծիլգէորգեան*

*Ժաք Գարաօղլանեան եւ Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Լիզա Գիւրքճեան*

*Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրօղլեան*

*Փիթըր Քէօրօղլեան*

*Արթըր Քէօրօղլեան*

*Ռաֆֆի Քէօրօղլեան*

*Ծոռները՝*

*Քրիստ, Ռազմիկ, Ռիթա, Սաօ, Կրէյս, Տէնիըլ, Մաթիւ, Սթիվըն, Մայքըլ եւ Քրիսթինա:*

*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ԱՐԱՐԱՅԻ ԳՐՈՀԸ

*Շարունակուած էջ 15-էն*

*այրելու նրանց: Ով դեռ չէր այրուել, ով կարող էր փախչում էր, իսկ վարսերը ճակատներին հոսած գինուորները, վիրաւոր կորիւնների նման ոստնում էին եւ փակում նրանց փախուստի ուղիները: Ահա այսպէս կը լինէր կռիւը, զարկին, մարտում մարեցին շատ բազում ասկեարների լոյսը, քեսապցի կամաւոր Քերոբը խոյացել էր գերման սպայի վրայ իր մատներով խեղդամահ արել նրան, ինչ էր փնտռում նա այս լեռներում եւ ում էր զինակցել: Յարձակման յորձանուտում զարնուել էին նաեւ կամաւորներ, քսաներեքն են եղել նրանք, որոնցից Սարգիս Տլլիկեան ու Միսաք Թասլաքեան՝ Մուսա Լեռցիներ, երկու քեսապցիներ: Վրէժի շողերին բազմած գնդակները մարել էին զարկերը հազարաւոր թշնամու զինուորների, գերավարուել էին իննիսուն հազար թշնամու զինուորներ, որոնք գլխիկոր անցան Հայ կամաւորների խաչաձեւած հրացանների սուինների տակից, որոնցից ժայթքած արեւը այրում էր նրանց աչքերը:*

*Որդեկորոյս մայրերի սրտերին ցաւ էր իջել, բայց նրանց լեռնական հոգիները հպարտ էին, որ նրանց զաւակները նահատակուել էին՝ յանուն ցեղի վրէժին մղուած մարտում եւ քաջութեան փառքի պսակները իրենց անուններին՝ գնում էին հայու յաւերժութեան տիեզերական ճանապարհով: Իսկ նրանց հոգիների ստուերները արդեօք չէի՞ն կանչում իրենց մայրերին՝*

*«Թրքաց մայրեր թող լան, իսկ դուք*

*Յաղթանակի յոյսեր տարէք հայերին»:*

*Արարայի ճակատամարտը իրենց կուռի հետ պանծացումն է Մուսա Լեռցիների սխրալի ոգու ճախրանքի: Տիրան Թէքէեան հաւաստել է, որ առանց Մուսա Լեռցիների պիտի չկազմաւորուէր հայկական Լեգէոն, առանց հայկական լեգէոնի յիշողութեան արժանի մեծ գործի արարում պիտի չլինէր, առանց Արարայի յաղթանակի տարբեր պիտի լինէր Միջին Արեւելքի ճակատագիրը: Պաղեստինեան Անգլօ-ֆրանսական բանակի հրամանատար՝ զօրավար Ալէմպի վստահ էր եղել, որ Արարայի յաղթանակը կարող էր վճռել Միջին Արեւելքի ճակատագիրը:*

*Դաղարել էին հրացանների զարկերը, խունկի փոխարէն ռազմադաշտից վառօդի ծուխն էր բարձրանում, գնում Վահագն Համաստեղութիւն, աւետելու Վահագնին արեւորդի քաջերի յաղթանակը: Կռւում զարնուած քաջերին էին բերել, քսաներեք էին նրանք, երկուսը Մուսալեռցի, երկուսը քեսապցի: Քահանան էր նրանց յաւերժութիւն ճամբուն: Զօրավար Ալէմպն մօտեցել էր նրանց, համբուրել ճակատները, խաչակնքել նրանց լանջերը: Նրա խօսքն էր տխրամած, այսպէս էր խօսել զօրավարը՝*

*- Հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայ զօրամաս մը ունենալու, անոնք կռուեցան փայլուն կերպով եւ մեծ բաժին մը ունեցան յաղթանակի մէջ: Եթէ, անգլիական երկու հարիւր հազարանոց բանակի փոխարէն իմ հրամանատարութեան տակ լինէր քսան հազար հայ զինուոր, ամբողջ արեւելքը կը նուաճէի:*

*Շարունակելի*

## ՀԱՅԵԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՑ՝ ՆԵՐԿԱՅԻՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*թեան ու Աւ. Իսահակեանի անուան կենտրոնական գրադարանի զուտ գրական չնորհանդէսներից, ընթերցելուց յետոյ, ոչ այնքան իմ, որքան գրքի հերոսների հետ Նոր Նորքի համայնքի դպրոցականները հանդիպում կազմակերպեցին թաղապետարանի լեփ-լեցուն սրահում, Հարաւարեւմտեան թաղամասի դպրոցականները՝ համայնքի գրադարանում, Գաւառի դպրոցականները՝ Գանձակ գիւղի դպրոցի դահլիճում, բանակ մեկնող զինակոչիկները՝ նոյն Գաւառի մշակոյթի պալատում: Բազմաթիւ այլ՝ յատկապէս արցախեան հանդիպումները չեմ թուարկում, որովհետեւ առանց յուզումի չեմ կարողանում վերյիշել, թէ 7ից 17 տարեկան աշակերտները ինչպիսի յափշտակութեամբ էին ունկնդրում իրենց ժամանակակիցներին՝*

*Անահիտ Մարտիրոսեանին, ում ամուսնուն Պաքւում, իր ու իր երեխաների ներկայութեամբ խողխողել էին, բայց նա Հայաստան հասնելուն պէս Արցախ էր մեկնել, Ջոկատ կազմաւորել, գտել էր ամուսնու դահիճներից մէկին, վրէժը լուծել,*

*Ֆելիքս Բուրմանին, ով Տալլինից եկել, մասնակցել էր Արցախի ազատագրութեանը, յաղթանակից յետոյ Հայաստանում հաստատուելով՝ հայուհու հետ էր ամուսնացել, հայկական բանակի համար հայ զինուորներ մեծացրել,*

*Սպարտակ Մաթեւոսեանին, որ 53 տարեկանում Վազգէն Սարգսեանի «Մահապարտների» գումարտակ կազմաւորելու կոչ լսելուն պէս բազմանդամ ընտանիքի հանապարզօրեայ հացի մասին չէր էլ մտածել, այդ տարիքում զինուոր էր դարձել, Արցախի հոգեւոր միջնաբերդը՝ Գանձասարը պաշտպանել,*

*Յակոբ Ասլանեանին, նա պատմութեան հերթական դասաժամն էր կիսատ թողել, Արցախում կռուել ու յաղթանակով վերադառնալով, անձնական օրինակով էր աւարտել հայոց պատմութեան հերոսապատումի դասերը:*

*Այդ հանդիպումների էականն ինձ համար ոչ թէ մարտերգերով ուղեկցուող ոգեշունչ ելոյթներն էին, այլ դպրոցականների հետզհետէ ամրապնդուող համոզումը, որ Հայաստանում այդպիսի հայեր էլ կան, իրօ՛ք կան, որ նրանք կռուել են, որպէսզի ոչ միայն յաղթեն, այլեւ իրենց ազգային արժանապատւութիւն, ինքնավստահութիւն, ապագայի հաւատ հաղորդեն:*

*Խոստովանեմ՝ որպէս հեղինակ ես ինձ իրապէս երջանիկ եմ զգացել միայն մի անգամ՝ այս տարուայ Ապրիլի 24ին յաջորդող աղջամուղջին, երբ պետական համալսարանի «Վարդանանք» հայրենասիրական ակումբի անդամները իմ՝ «Հայերի դատը Փարիզում» գրքի հերոսների՝ ԱՍԱԼԱ-ի մարտիկների հետ խոնարհում նախաձեռնեցին Եղեռնի յուշահամալիրում՝ յաւերժական կրակի բոցերի ներքոյ: Ուսանողները, այո՛, սգում էին մեր նահատակների կորուստը, բայց նաեւ ձեռքները բռունցք արած ուխտում, երդւում էին շարունակել պայքարը, արդարութեան, վերջնական յաղթանակի հասնել:*

*Նրանց երդումը, ուխտը ինձ համար չափազանց կարեւոր էր: Իմ Գրիգոր պապին ում անունը կրում եմ, 1915-ի ամրանը քառատել են Ակնի մատույցներում՝ Եփրատի աջ ափին: Մայրս, որ այն ժամանակ հազիւ չորս տարեկան է եղել, ամենայն մանրամասնութեամբ ինձ նկարագրել է քարափը, բայց հարիւր տարի անց էլ չեմ կարողանում ժառանգական պարտքս կատարել, անթաղ պապիս հողին յանձնել: Ինձ պէս միլիոն ու կէս հայեր չեն կարողանում: Այն դէպքում, երբ ֆրանսահայ հոգեվերլուծաբան Հելեն Փիրալեանը արդէն քանի տարի գիտական իր բառապաշարով պնդում է, որ մինչեւ մենք մեր նահատակների մասունքները քրիստոնէական ծէսով չյուղարկաւորենք, հոգեպէս չենք հանգստանայ:*

*Ով չի հաւատում ինձ՝ հայ չէ: Այսօր, վաղը, միւս օրը անպայման ստուարանալու, առնականանալու է մեր հայրենանուէր սերունդը, որը շարունակելով Արցախի յաղթարշաւը, ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնն է արժանապատիւ երկիր դարձնելու, այլեւ Արեւմտահայաստանն է ազատագրելու: Այդ սերունդը 1915-ից անթաղ մնացած նշխարքները հաւաքելու, յուղարկաւորելու է բնօրաններում ու այդ նոյն բնօրրաններում վերջնականապէս հիմնաւորուելով, ածու է ռոգելու, պատ է որմելու, ծնունդ, կնունք, իսկ երբ ժամանակը հասնի, նաեւ թաղում է անելու:*

*Ու Աստուած տեսնելու է, որ բարի է:*

## ԱՄԷՆ ԻՆՉ՝ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*ձեւաւորումների՝ ուղիղ ձեռագրի հասցեատէրերը բծախնդիր են, աշխատասէր եւ գործնական: Նրանք առհասարակ զբաղուած են եւ զսպուած: Սրածայր տառերը խօսում են եռանդուն, ագրեսիւ, կառավարելու եւ նպատակին արագ հասնելու ցանկութեամբ անձանց մասին: Այսօրինակ մարդիկ չեն սիրում ոչ մի տեսակի քննադատութիւն: Հաւասար տառերը խօսում են չափազանց հոգատար եւ պատասխանատու անձանց մասին: Նրանք սիրում են սկսած գործը աւարտին հասցնել եւ մանրուքների սիրահար են: Անհաւասար տառերը մերկացնում են վստահելի եւ անվճռական մարդկանց: Այսպիսի անձինք նախընտրում են հեշտ ճանապարհներով հասնել յաջողութեան: Սեղմուած գրելաոճը յատուկ է ներշնչուող եւ լուրջ անհատին:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680

F: (626) 797-6863 massis2@earthlink.net


ARMENIAN INDEPENDENCE DAY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ
20
FESTIVAL
Փառատօն
Կազմակերպութեամբ Organized By
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
SUNDAY SEPTEMBER 18, 2011
VERDUGO PARK, GLENDALE
Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
To reserve your booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938